

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015

«ՀՀ պետական պարտքի 2015թ. տարեկան հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Ա. Մարությանը, Ն. Գրիգորյանը, Մ. Հարությունյանը, Գ. Մալխասյանը, Ա. Եգանյանը, Վ. Դանիելյանը, Ս. Խանվելյանը, Բ. Խաչատրյանը, Հ. Ստեփանյանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Գ. Վարդապետյանը, Մ. Մելիքյանը, Ս. Խալաթյանը:

## **Բովանդակություն**

Մակրոտնտեսական միջավայրը.....	4
ՀՀ պետական պարտքը.....	6
ՀՀ կառավարության պարտքի սպասարկումը.....	12
Պետական գանձապետական պարտատոմսեր.....	14
Պետական արտարժույթային պարտատոմսեր.....	20
ՀՀ կառավարության վարկերը և փոխառությունները.....	24
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը.....	29
Կանխիկ հոսքերի կառավարումը.....	30
Ռիսկերի վերլուծությունը.....	33

## **Հավելվածներ**

Հավելված 1. Պետական պարտատոմսերով կատարված գործարքները 2015թ.	44
Հավելված 2. 2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերը .....	50
Հավելված 3. Պետական (գանձապետական) պարտատոմսերի մանրաձախ շուկան 2015թ-ին .....	52
Հավելված 4. 2015թ. ընթացքում ՀՀ կառավարության ներգրավված վարկերի գծով իրականացված գործառնությունները.....	55
Հավելված 5. 2015թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի ներգրավված վարկերի գծով իրականացված գործառնությունները.....	57
Հավելված 6. ՀՀ կառավարության կողմից տրամադրված և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող երաշխիքները.....	58
Հավելված 7. Պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային շուկայի գործակալները .....	59

## Հապավումներ

ՊՊ	Պետական պարտավորումներ
ՊԿՊ	Պետական կարճաժամկետ պարտավորումներ
ՄԺՊ	Միջին ժամկետայնության պարտավորումներ
ԵՊ	Երկարաժամկետ պարտավորումներ
ԽՊ	Խնայողական պարտավորումներ
ԳՊ	Գանձապետական պահառու
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք (2015թ.-ից ՀՆԱ ցուցանիշը ՀՀ ԱՎԾ-ի կողմից հաշվարկվում է համաձայն Ազգային հաշիվների համակարգ 2008 (ԱՀՀ 2008) միջազգային ստանդարտի: Ըստ ԱՀՀ 2008-ի վերանայվել են 2012-2014թթ. ՀՆԱ ցուցանիշները և համադրելի չեն 2000-2011թթ. ՀՆԱ ցուցանիշների հետ, որոնք հաշվարկված են համաձայն Ազգային հաշիվների համակարգ 1993 (ԱՀՀ 1993) ստանդարտի:) ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2016թ. ապրիլին վերանայվել է 2014թ. ՀՆԱ-ի ցուցանիշը:
ՋՆԱ	Ջուր ներկա արժեք
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ԳՄՀ	Գանձապետական միասնական հաշիվ
ՀՀ ՖՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՕՊ	Օտարերկրյա պետություններ
ՎՋՄԲ	Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ
ՎՋԵԲ	Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկ
ԵՆԲ	Եվրոպական Ներդրումային Բանկ
ՕՊԵԿ	ՕՊԵԿ-ի Միջազգային Ջարգացման Հիմնադրամ
ԱՋԲ	Ասիական Ջարգացման Բանկ
ԱՄՀ	Արժույթի Միջազգային Հիմնադրամ
ԾԻԳ	Ծրագրերի իրականացման գրասենյակ

## Մակրոտնտեսական միջավայրը

2015 թվականը բնութագրվել է տնտեսական ակտիվության դանդաղ աճի միտումներով՝ զուգակցվելով արտաքին միջավայրում նկատվող գործընկեր երկրների տնտեսական անբարենպաստ զարգացումներով, հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներում գնանկումային զարգացումներով, արտերկրից փոխանցվող դրամական միջոցների ծավալների նվազմամբ և թույլ ներդրումային ակտիվությամբ (արտաքին գործոններ), հատկանշական է գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ոլորտներում ակտիվությունը (ներքին գործոններ):

Մակրոտնտեսական կայունությունը պահպանելու համար առավելագույնս իրականացվել է համախառն պահանջարկը խթանող քաղաքականություն: Հարկաբյուջետային քաղաքականության մոտեցումը եղել է ընդլայնող և՛ եկամուտների, և՛ ծախսերի մասով, ընդլայնող է եղել նաև դրամավարկային քաղաքականությունը՝ ֆինանսական շուկայի տոկոսադրույքների նվազման ուղղությամբ:

**Տնտեսական աճ.** Տնտեսական աճը 2015 թվականին նախորդ տարվա նկատմամբ դանդաղել է՝ կազմելով 3%: Աճի դանդաղումը կրել է հիմնական գործընկեր երկրներում արտաքին պահանջարկի և հումքային ապրանքների գների նվազման, ինչպես նաև Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումների կրճատման արդյունքում տնօրինվող եկամտի աճի տեմպերի դանդաղման ազդեցությունը:

**Արտահանում և ներմուծում.** 2015 թվականի ընթացքում ապրանքների և ծառայությունների դոլարային արտահայտությամբ արտահանումը կրճատվել է 5.4%-ով, իսկ ներմուծումը՝ 20.3%-ով: Արտահանման կրճատման հետ մեկտեղ 27.8%-ով կրճատվել է սկզբնական և երկրորդային եկամուտների զուտ ներհոսքը:

**Փոխարժեք.** 2015 թվականի ընթացքում արժութային շուկայում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի վարքագիծը հիմնականում կայուն է եղել. 2015 թվականի հունվար ամսին 475.73 ՀՀ դրամի դիմաց հունվար-դեկտեմբերին ԱՄՆ դոլարի միջին ամսական փոխարժեքը կազմել է 477.92 ՀՀ դրամ և նախորդ տարվա ընթացքում ձևավորված միջինի (415.92) նկատմամբ արժեզրկվել 13%-ով:

**Գնաճ.** Գնաճի զարգացումների արդյունքում 2015 թվականին ՀՀ սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը տատանվել է հիմնականում թույլատրելի միջակայքի շրջակայքում ( $4 \pm 1.5\%$ ): Միայն առաջին եռամսյակում գնաճն ընդլայնվել է մինչև 5.8% և տարեվերջին սպասվածից կտրուկ նվազման հետևանքով իջել թույլատրելի միջակայքի ստորին սահմանագծից ներքև՝ կազմելով -0.1%:

**Պետական բյուջե.** 2015 թվականին իրականացված հարկաբյուջետային

քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա ունեցել է ընդլայնող ազդեցություն: Պետական բյուջեի եկամուտների անվանական աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է շուրջ 2%, իսկ հարկային եկամուտներինը՝ 0.4%: Պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 4.8%-ը, 2014 թվականի 1.9%-ի համեմատ:

Այս պայմաններում կառավարությանը հաջողվել է պահպանել պարտքի կայունությունը՝ կառավարելով հիմնական ռիսկերը: Պետական պարտքի վերաբերյալ տվյալները հասանելի են ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում ([www.minfin.am](http://www.minfin.am)):

## ՀՀ պետական պարտքը

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 2,456.3 մլրդ դրամ կամ 5,077.7 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա համեմատ դրամով արտահայտված պարտքի ծավալն աճել է 346.7 մլրդ դրամով, իսկ ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքի ծավալը՝ 636.2 մլն ԱՄՆ դոլարով:

**Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետության պետական պարտքը**

	31.12.2014		31.12.2015	
	% ՀՆԱ*-ի նկատմամբ	մլրդ դրամ	% ՀՆԱ*-ի նկատմամբ	մլրդ դրամ
<b>ՀՀ պետական պարտք</b>	<b>43.7</b>	<b>2,109.6</b>	<b>48.8</b>	<b>2,456.3</b>
որից				
<b>ՀՀ կառավարության պարտք</b>	<b>39.4</b>	<b>1,900.6</b>	<b>44.2</b>	<b>2,225.9</b>
այդ թվում՝				
<i>արտաքին պարտք</i>	<i>32.9</i>	<i>1,588.9</i>	<i>36.9</i>	<i>1,857.5</i>
այդ թվում՝				
վարկեր և փոխառություններ		1,275.3		1,420.4
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր		0.4		0.7
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր		313.1		436.4
արտաքին երաշխիքներ**				
<i>ներքին պարտք</i>	<i>6.5</i>	<i>311.7</i>	<i>7.3</i>	<i>368.4</i>
այդ թվում՝				
վարկեր և փոխառություններ		1.9		-
ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր		289.4		320.0
ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր		19.4		47.4
ներքին երաշխիքներ***		1.0		1.0
<b>ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք</b>	<b>4.3</b>	<b>209.0</b>	<b>4.6</b>	<b>230.4</b>
որից				
ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր		71.2		68.1

\*ՀՆԱ-ի հաշվարկման առանձնահատկությունները ներկայացված են «Հապավումներ»>> բաժնում:


\*\*ՀՀ կառավարության արտաքին երաշխիքները տրամադրվել են ՀՀ կենտրոնական բանկի վարկերի գծով և կրկնահաշվարկից խուսափելու նպատակով արտացոլված են ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի մեջ:

\*\*\*Ներքին երաշխիքների ցանկը ներկայացված է Հավելված 6-ում:

Հիմք ընդունելով «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերը, համաձայն որոնց ներքին պետական պարտքը Հայաստանի Հանրապետության անունից ՀՀ ռեզիդենտների, իսկ արտաքին պետական պարտքը ՀՀ ոչ ռեզիդենտների և օտարերկրյա պետությունների հանդեպ փոխառության կամ վարկային պայմանագրերի հիման վրա ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների

հանրագումարն է, հաշվետվության մեջ տվյալները ներկայացվել են հաշվի առնելով ոչ թե ստանձնված պարտավորության արժույթը, այլ պարտատերերի ռեզիդենտության հանգամանքը:

**Գծապատկեր 1. ՀՀ պետական պարտքի և պետական պարտք/ՀՆԱ\* ցուցանիշների դինամիկան**



\*ՀՆԱ-ի հաշվարկման առանձնահատկությունները ներկայացված են «Հապավումներ» բաժնում:

Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 48.8%՝ ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2016-2018թթ. ռազմավարական ծրագրով և 2015թ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով նախատեսված 41.1%-ի փոխարեն, որը հիմնականում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

- 2015թ. պետական բյուջեի հաշվարկների համար հիմք էր վերցվել ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար 411.21 փոխարժեքը, սակայն, սկսած 2014թ. տարեվերջից ՀՀ դրամն էականորեն արժեզրկվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ, և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամով արտահայտված պետական պարտքի ծավալը հաշվարկվել է հիմք ընդունելով նույն օրվա ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար 483.75 փոխարժեքը, ինչի արդյունքում փոխարժեքի ազդեցությունը պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի վրա եղել է ամենամեծը՝ նպաստելով այդ ցուցանիշի մոտ 6.6 տոկոսային կետով ավելացմանը,
- 2015թ. մարտի 26-ին թողարկվեցին վերը նշված ծրագրերով չնախատեսված 10 տարի

մարման ժամկետով 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով Եվրապարտատոմսեր, և չնայած, որ հասույթից 200 մլն ԱՄՆ դոլարը նույն օրն ուղղվեց 2013թ. թողարկված Եվրապարտատոմսերի մի մասի հետգնմանը, իսկ 85 մլն ԱՄՆ դոլարին համարժեք 40.0 մլրդ դրամը՝ ՊՊ-երի հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման ծրագրի նվազեցմանը, այնուամենայնիվ, ՀՀ կառավարության ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքի ծավալն աճեց, իսկ այս գործարքների ազդեցությունը պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի վրա կազմեց մոտ 2.4 տոկոսային կետ,

- ՀՀ կառավարության արտաքին պարտքի աճի վրա ազդող գործոն է հանդիսացել նաև մի շարք վարկային ծրագրերի գծով կատարված խոշոր մասհանումները, որոնք նախատեսված չեն եղել բյուջեով կամ նախատեսված են եղել ավելի փոքր ծավալներով, ինչի արդյունքում ավելացրել են պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը մոտ 0.7 տոկոսային կետով,
- հատկանշական է, որ եղել են ոչ միայն պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի աճի վրա ազդող գործոններ, այլ նաև դրա նվազմանը նպաստող գործոններ, որոնց թվում են ՀՆԱ-ի ծրագրված և փաստացի ցուցանիշների տարբերությունը, որը նպաստել է պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի 1.6 տոկոսային կետով նվազմանը, ինչպես նաև ՊՊ-երի միջոցով դեֆիցիտի ֆինանսավորման հաստատված ծրագրի և փաստացի արդյունքների ազդեցությունը, որը պակասեցրել է պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը մոտ 0.4 տոկոսային կետով:

Արդյունքում, ՀՀ կառավարության պարտքի ծավալն ավելի մեծ կշիռ է ունեցել ՀՆԱ-ի մեջ՝ 7.7 տոկոսային կետով գերազանցելով ծրագրված ցուցանիշը:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության պարտքին, ապա այն ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2016-2018թթ. ռազմավարական ծրագրով նախատեսվում էր, որ 2015թ. տարեվերջին չպետք է գերազանցեր 1,802.3 միլիարդ դրամը կամ ՀՆԱ 37.0 տոկոսը: Սակայն, ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2015թ. վերջին կազմել է 44.2%՝ ավել լինելով ծրագրային ցուցանիշից 7.2 տոկոսային կետով, որի պատճառ են հանդիսացել հիմնականում վերը նշված հանգամանքները:

2015թ. ներքին աղբյուրներից ներգրավված զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների) ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորվել է 13.9 մլրդ դրամով, իսկ արտաքին աղբյուրներից ներգրավված զուտ փոխառու միջոցների հաշվին՝ 302.9 մլրդ դրամով:



**Աղյուսակ 2. Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների)**

(մլրդ դրամ)	2014 փաստ	2015 ծրագիր	2015 ճշտված ծրագիր	2015 փաստ
Ներքին աղբյուրներ	15.03	38.4	1.4	13.9
Արտաքին աղբյուրներ	68.8	56.1	226.6	302.9

2015թ. զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների) դեֆիցիտի ֆինանսավորման 2016-2018թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով նախատեսված և 2015թ. ՀՀ պետական բյուջեով հաստատված ծրագրային ցուցանիշները տարվա ընթացքում ճշգրտվել են՝ պայմանավորված 2014թ. տարեվերջին սկիզբ առած և 2015թ. տարեկազմին շարունակված ՀՀ մակրոտնտեսական անկայուն իրավիճակի պայմաններում մարտ ամսին իրականացված եվրապարտատոմսերի թողարկումով: Արդյունքում, ներքին աղբյուրներից զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների) դեֆիցիտի ֆինանսավորման ծավալը նվազեցվել է, քանի որ ֆինանսական շուկայում ցածր իրացվելիության պայմաններում տարեկազմին գանձապետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկ չի եղել, և միևնույն ժամանակ եվրապարտատոմսերի տեղաբաշխումից ստացված հասույթի չափով ավելացվել է արտաքին աղբյուրներից զուտ փոխառու միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման ծավալը: Ներքին աղբյուրների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման ճշգրտված ծրագրի և փաստացի կատարողականի ցուցանիշների շեղումը պայմանավորված է եղել ներքին պետական պարտքի շուկայում գանձապետական պարտատոմսերի նկատմամբ տարեվերջին առաջացած ավելցուկային պահանջարկի պայմաններում, պետական բյուջեի հարկային եկամուտների և տուրքերի ծրագրի և փաստացի կատարողականի բացասական շեղման և միաժամանակ նախորդ տարիների համեմատ ծախսերի բարձր կատարողականի արդյունքում աճող դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով իրականացված գանձապետական պարտատոմսերի լրացուցիչ թողարկմամբ:

Արտաքին աղբյուրների հաշվին ճշգրտված ծրագրի և փաստացի կատարողականի ցուցանիշների շեղումը պայմանավորված է եղել՝


- դեկտեմբերին արտաքին աղբյուրներից լրացուցիչ բյուջետային աջակցության վարկերի՝ Եվրասիական Զարգացման Բանկից բյուջետային աջակցության ծրագրի առաջին մասնաբաժնի՝ 100 մլն դոլար և Ասիական Զարգացման Բանկի <<Կին ձեռներեցների աջակցության ծրագրի>> երկրորդ մասնաբաժնի՝ 9 մլն դոլար միջոցների ստացմամբ,
- մի շարք վարկային ծրագրերի գծով հատկապես չորրորդ եռամսյակում կատարված

խոշոր մասհանումներով, որոնք կամ նախատեսված չեն եղել բյուջեով, կամ նախատեսված են եղել ավելի փոքր ծավալներով,

- 2015թ. ընթացքում ծրագրային փոխարժեքների և փաստացի մասհանումների փոխարկման պահին ձևավորված փաստացի փոխարժեքների միջև եղած էական շեղումներով:

Ինչ վերաբերում է 2015թ. ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող ցուցանիշներին, ապա դրանք ունեցել են հետևյալ տեսքը՝


**Գծապատկեր 2. ՀՀ արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները\***



\*ՀՆԱ-ի հաշվարկման առանձնահատկությունները ներկայացված են «Հապավումներ» բաժնում:

Նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի ՁՆԱ/ՀՆԱ ցուցանիշն աճել է 8.6 տոկոսային կետով, ՀՀ արտաքին պետական պարտքի ՁՆԱ/Արտահանում ցուցանիշը՝ 25.0 տոկոսային կետով, իսկ ՀՀ արտաքին պետական պարտք/Արտահանում ցուցանիշը՝ 23.4 տոկոսային կետով: Վերը նշված ցուցանիշների աճը պայմանավորված է նրանով, որ ՀՀ արտաքին պետական պարտքը դոլարային արտահայտությամբ ավելացել է 14.1%-ով, ինչպես նաև 5.4%-ով նվազել է արտահանման ծավալը և 9.3%-ով՝ ԱՄՆ դոլարով արտահայտված անվանական ՀՆԱ-ն:

**Գծապատկեր 3. ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը բնութագրող ցուցանիշները**



ՀՀ արտաքին պետական պարտքի գծով վճարումներ (մարում և տոկոսավճար)/Արտահանում, ՀՀ արտաքին պետական պարտքի գծով վճարումներ/Պետբյուջեի եկամուտներ և ՀՀ արտաքին պետական պարտքի տոկոսավճար/Արտահանում ցուցանիշները նախորդ տարվա համեմատ աճել են՝ համապատասխանաբար 4.4, 6.4 և 1.0 տոկոսային կետերով: Վերը նշված ցուցանիշների աճը պայմանավորված է նրանով, որ նախորդ տարվա համեմատ 50.4%-ով ավելացել է ՀՀ արտաքին պետական պարտքի մարումների ծավալը և 38.3%-ով՝ ՀՀ արտաքին պետական պարտքի գծով տոկոսավճարների ծավալը, ինչպես նաև նվազել են արտահանման ծավալը և ԱՄՆ դոլարով արտահայտված պետական բյուջեի եկամուտները:

## ՀՀ կառավարության պարտքի սպասարկումը

2015թ. ՀՀ կառավարությունը ժամանակին և ամբողջ ծավալով կատարել է տոկոսավճարների գծով ստանձնած իր պարտավորությունները:

### Աղյուսակ 3. ՀՀ կառավարության պարտքի գծով տոկոսավճարները

(մլրդ դրամ)	2014 փաստ	2015 ծրագիր	2015 ճշտված ծրագիր	2015 փաստ
<b>Տոկոսավճարներ</b>	<b>61.64</b>	<b>73.76</b>	<b>74.10</b>	<b>74.08</b>
որից				
<i>ներքին պարտքի գծով</i>	33.05	35.20	32.19	32.1
<i>արտաքին պարտքի գծով</i>	28.59	38.56	41.91	41.90

2015թ. ՀՀ կառավարության պարտքի գծով տոկոսավճարները կազմել են 74.08 միլիարդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 20.2%-ով, որը պայմանավորված է պարտքի ծավալի աճով, կառավարության արտաքին պարտքի գործիքակազմի փոփոխություններով, ինչպես նաև ՋՄԸ-ի գործող վարկերի գծով տոկոսադրույքների բարձրացմամբ: 2016-2018թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով նախատեսված ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարների ծրագիրը հաշվետու տարվա ընթացքում ճշգրտվել է՝ ավելանալով 3.35 մլրդ դրամով: Դա պայմանավորված է եղել հետևյալ հանգամանքներով՝

- 2015թ. չնախատեսած, սակայն մարտ ամսին թողարկված եվրապարտատոմսերի կիսամյակային արժեկտրոնային եկամտի առաջին վճարումը պետք է իրականացվեր 2015թ. սեպտեմբերին, և միաժամանակ իրականացված հետզնման արդյունքում նվազել էր 2013թ. թողարկված եվրապարտատոմսերի արժեկտրոնային եկամտի գումարը՝ ընդհանուր առմամբ տոկոսավճարների գծով պարտավորությունները ավելացնելով 5.89 մլրդ դրամով,
- ի հաշիվ 6-ամսյա ԱՄՆ դոլարով LIBOR-ի, 6-ամսյա EURIBOR-ի տոկոսադրույքների և ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի փոխարժեքի կանխատեսումային և 2015թ. ընթացքում ձևավորված փաստացի մեծությունների տարբերության, արտաքին մի շարք վարկային ծրագրերի գծով մասհանումների ծրագրերի թերակատարման, ինչպես նաև տարվա ընթացքում արտաքին ֆինանսավորմամբ որոշ ծրագրերի գծով մասհանումների ուշ կատարման՝ արտաքին վարկերի սպասարկման գծով առաջացել էր նաև 2.54 մլրդ դրամի տնտեսում:

Ինչ վերաբերում է 2016-2018թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով նախատեսված ՀՀ կառավարության ներքին պարտքի

տոկոսավճարների ծրագրի ճշգրտմանը, պետք է նշել, որ այն նվազեցվել է 3.0 մլրդ դրամով, քանի որ պակասեցվել է ներքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման (առանց մուրհակների) ծրագիրը և կանխատեսվել են տոկոսավճարների սկզբնական հաստատված ծրագրի նկատմամբ տնտեսումներ:

Եթե նախորդ տարիներին ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը զիջում էին ՀՀ կառավարության ներքին պարտքի գծով տոկոսային ծախսերին, ապա 2015թ. արձանագրվել է հակառակ պատկերը, քանի որ պարտքի կառուցվածքում զգալիորեն ավելացել են միջազգային կապիտալի շուկայից արտարժութային պարտատոմսերի թողարկման միջոցով շուկայական պայմաններով փոխառու միջոցների ներգրավման ծավալները, և միաժամանակ տարեցտարի նվազում են արտաքին աղբյուրներից արտոնյալ պայմաններով ներգրավված վարկերի ծավալները: Վերջինս պայմանավորված է նրանով, որ միջազգային ֆինանսական կառույցները Հայաստանն արդեն իսկ դասում են միջին եկամուտ ունեցող երկրների շարքին և ավելի շատ հակված են շուկայականին մոտ պայմաններով փոխառություններ տրամադրել:

Հարկ ենք համարում նշել, որ Libor-ի և Euribor-ի պատմականորեն ցածր մակարդակները դեռևս որոշակիորեն զսպում են շուկայականին մոտ պայմաններով տրամադրված վարկերի սպասարկման ծախսերը:

## **Պետական գանձապետական պարտատոմսեր**

ՊՊ-երի թողարկումները սովորաբար ծրագրավորվում են այնպես, որպեսզի պետական բյուջեի հոսքերը տարվա ընթացքում լինեն հնարավորինս հավասարաչափ բաշխված: Սակայն, 2015 թվականը բացառություն էր, քանի որ 2014թ. տարեվերջին ՀՀ դրամի փոխարժեքի կտրուկ անկման հետևանքով ֆինանսական շուկայում արձանագրված շուկային իրավիճակը խիստ բացասաբար անդրադարձավ ՊՊ-երի շուկայի վրա: ՊՊ-երի նկատմամբ պահանջարկի բացակայության պատճառով 2015թ. հունվար ամսին ՀՀ ֆինանսների նախարարությունը ձեռնպահ մնաց ՊՊ-երի տեղաբաշխումների իրականացումից, իսկ փետրվարից ապրիլ ամիսներին նախաձեռնեց ՊՊ-երի շուկայի ակտիվացման ծրագիր: Վերջինս նախատեսում էր առաջնային գործակալների (Հավելված 7) հետ սերտ համագործակցության միջոցով պակաս իրացվելի միջնաժամկետ ու երկարաժամկետ ՊՊ-երի հետգնումների և ՊԿՊ-երի տեղաբաշխումների միջոցով աստիճանաբար վերսկսել ՊՊ-երի տեղաբաշխումները՝ հետզհետե անցում կատարելով կանոնավոր թողարկումների գրաֆիկին: Ծրագիրը հաջողվեց, քանի որ տարեկան արդյունքներով ՊՊ-երի միջոցով իրականացվեց 15.56 մլրդ դրամի դեֆիցիտի ֆինանսավորում, չնայած որ ՊՊ-երի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի հաստատված սկզբնական ծրագիրը 40.0 մլրդ դրամից նվազեցվել էր մինչև 3.0 մլրդ դրամի:


Տարվա ընթացքում ՊՊ-երի միջոցով բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ամսական և աճողական տվյալները ներկայացված են աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 4. ՊՊ-երի միջոցով բյուջեի պակասուրդի ֆինանսավորումն ըստ ամիսների (մլն դրամ)**

	Ամսական		Կուտակային (աճողական)	
	2014	2015	2014	2015
<b>Հունվար</b>	1,385	(4,450)	1,385	(4,450)
<b>Փետրվար</b>	1,933	2,411	3,318	(2,039)
<b>Մարտ</b>	(3,736)	(3,544)	(418)	(5,583)
<b>Ապրիլ</b>	(9,718)	(2,407)	(10,137)	(7,990)
<b>Մայիս</b>	5,392	(2,191)	4,745	(10,181)
<b>Հունիս</b>	6,341	2,721	1,596	(7,460)
<b>Հուլիս</b>	(8,134)	5,044	(6,538)	(2,416)

<b>Օգոստոս</b>	4,340	(774)	(2,198)	(3,190)
<b>Սեպտեմբեր</b>	8,285	2,541	6,087	(649)
<b>Հոկտեմբեր</b>	4,431	1,487	10,517	838
<b>Նոյեմբեր</b>	4,943	9,630	15,461	10,468
<b>Դեկտեմբեր</b>	1,194	5,097	16,655	15,565

**Գծապատկեր 4. ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ամսական և կուտակային ֆինանսավորումը (մլրդ դրամ)**



Հետևելով ՀՀ 2015թ. պետական բյուջեի պակասուրդի կուտակային ֆինանսավորման դինամիկային, կարելի է նկատել, որ այն, տարվա սկզբից լինելով բացասական, շարունակել է նվազել՝ մայիսին կազմելով (10.18) մլրդ դրամ, որից հետո կայուն կերպով աճել է՝ հոկտեմբեր ամսվանից սկսած արձանագրելով դրական ցուցանիշներ:

Շրջանառության մեջ գտնվող ՊՊ-երի ծավալը 2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 320.77 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճելով 10.7%-ով, որի պայմաններում ՊՊ-երի կառուցվածքը եղել է հետևյալը՝

**Աղյուսակ 5. Շրջանառության մեջ գտնվող ՊՊ-երի կառուցվածքը**

(մլրդ դրամ)	2014		2015	
ՊԿՊ	12.50	4.3%	21.50	6.7%
ՄԺՊ	150.85	52.0%	153.89	48.0%
ԵՊ	125.47	43.3%	144.35	45.0%
ԽՊ	1.07	0.4%	1.03	0.3%
<b>Ընդամենը պարտատոմսեր</b>	<b>289.89</b>	<b>100%</b>	<b>320.77</b>	<b>100%</b>

2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի կառուցվածքն ըստ մարմանը մնացած օրերի հետևյալն է՝

**Աղյուսակ 6. 2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՊՊ-երի կառուցվածքն ըստ մարման մնացած օրերի**

	Ծրագիր	Փաստ
<b>մինչև 1 տարի</b>	<b>22.3%</b>	<b>17.1%</b>
<b>1-5 տարի</b>	<b>46.7%</b>	<b>46.4%</b>
<b>5-ից ավելի տարի</b>	<b>31.0%</b>	<b>36.5%</b>

Ինչպես երևում է աղյուսակից, 2016-2018թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով նախատեսված ՊՊ-երի կառուցվածքն ըստ մարման մնացած օրերի ցուցանիշը փաստացի կատարողական արդյունքներով բավականին բարելավվել է՝ նվազեցնելով վերաֆինանսավորման ռիսկը:


Հավելված 2-ում ներկայացված է տեղեկատվություն շրջանառության մեջ գտնվող ՊՊ-երի վերաբերյալ:

2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ պետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 2065 օր՝ 2014 թվականի դեկտեմբերի 30-ի 2003 օրվա դիմաց, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ 13.99%: Տարվա արդյունքներով հաջողվել է ՊՊ-երի միջին կշռված ժամկետայնությունը երկարացնել 62 օրով, սակայն, հաշվի առնելով ՊՊ-երի շուկայում 2015թ. արձանագրված զարգացումները և ՊՊ-երի առաջնային տեղաբաշխման միջին եկամտաբերության աճը (2015թ. այն կազմել է 14.6%՝ 2014թ. 9.8%-ի դիմաց, որին նպաստել է նաև այն, որ 2015թ. տեղաբաշխված երկարաժամկետ պարտատոմսերի կշիռը նախորդ տարվա նկատմամբ 1.5 անգամ ավելին է եղել), դեկտեմբերի 30-ի դրությամբ ՊՊ-երի




միջին կշռված եկամտաբերությունը նախորդ տարվա համեմատ արձանագրել է 0.5 տոկոսային կետով աճ:

**Գծապատկեր 5. ՊՊ-երի եկամտաբերության և ժամկետայնության դինամիկան 2015թ.**



**Գծապատկեր 6. ՊՊ-երի կառուցվածքն ըստ թողարկման ժամկետի 2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ**



ՀՀ ՖՆ-ն ԳՊ համակարգի միջոցով ՊՊ-երի մանրաձախ շուկայում տեղաբաշխվող և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ եղած ԽՊ-երի ծավալը նվազել է 3.9%-ով՝ կազմելով 1,032.8 միլիոն դրամ: 2015թ. ՊՊ-երի մանրաձախ շուկայում

իրականացված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 3-ում:

Շրջանառության մեջ գտնվող ՊՊ-երի ծավալի աճին զուգահեռ ավելանում են նաև դրանց մարման հետ կապված վճարումները և սպասարկման ծախսերը:

**Աղյուսակ 7. ՊՊ-երի մարումների և սպասարկման ծախսերի բաշխվածությունը տարվա ընթացքում (մլն դրամ)**

	Մարում		Սպասարկում	
	2014	2015	2014	2015
<b>Հունվար</b>	4,255	4,499	1,160	249
<b>Փետրվար</b>	5,737	13,583	6,337	6,059
<b>Մարտ</b>	5,192	16,121	1,157	655
<b>Ապրիլ</b>	14,440	20,122	7,482	8,056
<b>Մայիս</b>	2,767	8,288	196	340
<b>Հունիս</b>	4,823	3,524	415	176
<b>Հուլիս</b>	15,301	3,471	915	119
<b>Օգոստոս</b>	4,050	9,021	6,539	6,925
<b>Սեպտեմբեր</b>	2,411	4,422	898	271
<b>Հոկտեմբեր</b>	1,503	17,259	7,677	8,453
<b>Նոյեմբեր</b>	1,060	6,467	40	375
<b>Դեկտեմբեր</b>	1,421	4,767	130	453
<b>Ընդամենը</b>	<b>62,960</b>	<b>111,543</b>	<b>32,948</b>	<b>32,129</b>

2015թ. փետրվար և մարտ ամիսների մարումների մեծ ծավալներն արդյունք են ՊՊ-երի շուկայի ակտիվացման նպատակով փոխանակման ծրագրի շրջանակում իրականացված հետգնումների, իսկ ապրիլ և հոկտեմբեր ամիսների մեծ ծավալով վճարումներն այդ ժամանակահատվածներում կատարված ուղենշային պարտատոմսերի մարումներն են: Փետրվար, ապրիլ, օգոստոս և հոկտեմբեր ամիսների սպասարկման ծախսերի մեծ ծավալները հիմնականում պայմանավորված են թողարկված ուղենշային պարտատոմսերի սպասարկման հետ:

Հետևելով կառավարության պարտքի կառավարման միջազգային առաջավոր փորձին և ձգտելով բարձրացնել ՊՊ-երի իրացվելիությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ պետական բյուջեի եկամուտները համեմատաբար բարձր են ապրիլ և հոկտեմբեր ամիսներին՝ թողարկողը հետզհետե կենտրոնացնում է պարտքի մարման և սպասարկման գծով հիմնական վճարումները տարվա երկու օրերին՝ ապրիլի և հոկտեմբերի 29-ին: Այսպես, միջին ժամկետայնության պարտատոմսերի մարումները կիրականացվեն տարվա առաջին կեսին, իսկ երկարաժամկետ պարտատոմսերինը՝ տարվա երկրորդ կեսին:

2015թ. ընթացքում պետական պարտատոմսերով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հաշվետվության Հավելված 1-ում:

### **Պետական պարտատոմսերի երկրորդային շուկան**

Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործարքների քանակը նախորդ տարվա համեմատ նվազել է 610-ով, իսկ գործարքների ծավալն աճել է 29.3 մլրդ դրամով: Գործարքների միջին օրական ծավալն աճել է 26.1%-ով՝ հասնելով 776.7 մլն դրամի: ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի առևտրային հարթակում կատարվող գործարքների ծավալը նվազել է մոտ 2.3 անգամ, իսկ արտաբորսայական գործարքների բաժինը գործարքների ընդհանուր ծավալում աճել է 14.3%-ով: Երկրորդային շուկայում կատարված գործարքների հիմնական բնութագրերը ներկայացված են ստորև:

#### **Աղյուսակ 8. Երկրորդային շուկայում պետական պարտատոմսերով կատարված գործարքների հիմնական բնութագրերը**

	2014	2015
<b>Գործարքների ընդհանուր քանակը (հատ)</b>	<b>2035</b>	<b>1425</b>
<b>Գործարքների ընդհանուր ծավալը (մլրդ դրամ), որից՝</b>	<b>154.0</b>	<b>183.3</b>
արտաբորսայական	119.6	168.6
բորսայական	32.2	13.7
ՀՀ ԿԲ կողմից իրականացված	0.9	1.0
<b>Երկրորդային շուկայի ցուցանիշները</b>		
Կատարված բոլոր գործարքների միջին կշռված եկամտաբերությունը՝ (%)	10.43	14.46
Միջին կշռված ժամկետայնությունը (օր)	2786	2873
Միջին օրական ծավալը (մլն դրամ)	615.8	776.7
Գործարքների միջին օրական քանակը (հատ)	8	6

## Պետական արտարժույթային պարտատոմսեր

ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 16-ի նիստի N 19 արձանագրային որոշմամբ հաստատված «Միջազգային կապիտալի շուկայում արտարժույթային պարտատոմսերի թողարկման հայեցակարգը» սկիզբ դրեց Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային ֆինանսական շուկայում արտարժույթային պարտատոմսերի թողարկման գործընթացի կազմակերպմանը:

ՀՀ կառավարությունը, կատարելով նախապատրաստական բոլոր անհրաժեշտ աշխատանքները, 2013թ. առաջին անգամ նախաձեռնեց և սեպտեմբերի 30-ին հաջողությամբ իրականացրեց եվրապարտատոմսերի առաջին թողարկումը: Թողարկվեց 7 տարի մարման ժամկետով, 700 մլն ԱՄՆ դոլար ծավալով, 6% արժեկտրոնային եկամտաբերությամբ, արժեկտրոնների կիսամյակային վճարմամբ եվրապարտատոմսեր, որոնց տեղաբաշխման եկամտաբերությունը կազմեց 6.25%:

ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 700-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2015-2017թթ. ռազմավարական ծրագրով նախատեսվել էր, որ ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին կիրականացնի եվրապարտատոմսերի նոր թողարկումներ՝ ընթացիկ հաշվի և պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման, տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովելու, ինչպես նաև պետական պարտքի գործիքակազմն ընդլայնելու համար: Այստեղ հաշվի են առնվել այն հանգամանքները, որ միջազգային կազմակերպությունները, Հայաստանն այլևս համարելով միջին եկամուտ ունեցող երկիր, նվազեցրել և շարունակում են նվազեցնել արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը, ինչպես նաև այն, որ Հայաստանն արդեն իսկ մուտք է գործել միջազգային կապիտալի շուկա:

2014թ. տարեվերջից փոխարժեքի շուկայում արձանագրված իրավիճակի արդյունքում ՊՊ-երի նկատմամբ պահանջարկի բացակայության, ինչպես նաև տնտեսական ակտիվության թուլացման արդյունքում հարկային եկամուտների ծրագրից շեղման պայմաններում, հիմք ընդունելով ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը, ՀՀ կառավարությունը 2015թ. մարտի 26-ին իրականացրեց եվրապարտատոմսերի երկրորդ թողարկումը, որի ծավալը 500 մլն ԱՄՆ դոլար էր, մարման ժամկետը՝ 10 տարի, արժեկտրոնային եկամտաբերությունը՝ 7.15%, արժեկտրոնների վճարումը՝ կիսամյակային, իսկ տեղաբաշխման եկամտաբերությունը՝ 7.5%: ՀՀ կառավարությունը եվրապարտատոմսերի երկրորդ թողարկման հասույթից նույն օրը միջոցներ ուղղեց առաջին թողարկման 700 մլն ԱՄՆ դոլար եվրապարտատոմսերից 200 մլն ԱՄՆ դոլարի հետզնմանը՝ շրջանառության մեջ թողնելով երկու թողարկման 500-ական մլն ԱՄՆ դոլար ծավալով եվրապարտատոմսեր:


## Աղյուսակ 9. 2015թ. թողարկված եվրապարտատոմսերի տեղաբաշխման պայմանները

Թողարկող	Հայաստանի Հանրապետություն
Վարկանիշեր	Ba3 (բացասական) Մուդիս / B+ (կայուն) Ֆիթչ
Թողարկման ձևաչափը	Reg S / 144A
Տեղաբաշխման ամսաթիվը	26.03.2015թ.
Մարման ամսաթիվը	26.03.2025թ.
Արժեկտրոն	7.150%
Գին	97.568%
Եկամտաբերություն	7.500%
Ուղենիշ	2025թ. փետրվարին մարվող ԱՄՆ պարտատոմս 2.000%
Ուղենիշի նկատմամբ սփրեդը	551.8 բազիսային կետ
Միջին սվոփի նկատմամբ սփրեդը	543.7 բազիսային կետ
Գլխավոր տեղաբաշխողները	Deutsche Bank, HSBC, J.P. Morgan
Գնանշումը	Իռլանդական ֆոնդային բորսա


2015թ. թողարկված եվրապարտատոմսեր ձեռք բերելու համար հայտեր են ստացվել 19 երկրների 100 ներդրողներից, և պահանջարկը կազմել է 980 մլն ԱՄՆ դոլար:

2015թ. թողարկած 10 տարի մարման ժամկետով եվրապարտատոմսերի թողարկումն ավելի ընդլայնեց տեղաբաշխման աշխարհագրությունը և ներդրողների կառուցվածքը:

### Գծապատկեր 7. 2015թ. թողարկված եվրապարտատոմսերի տեղաբաշխման աշխարհագրությունը




**Գծապատկեր 8. 2015թ. թողարկված եվրապարտատոմսերի տեղաբաշխումն ըստ ներդրողների տեսակի**




ՀՀ կառավարության թողարկված եվրապարտատոմսերի գնի սփրեղը հաշվարկվում է նույն ժամկետայնության ԱՄՆ ուղենշային պարտատոմսերի նկատմամբ:

**Գծապատկեր 9. ԱՄՆ ուղենշային պարտատոմսերի նկատմամբ ՀՀ կառավարության թողարկված եվրապարտատոմսերի գնի սփրեղը 2015թ. ընթացքում (բազիսային կետ)**



ՀՀ կառավարության կողմից թողարկված եվրապարտատոմսերի գնանշումների դինամիկան հաշվետու տարում ներկայացված է գծապատկեր 10-ում:


**Գծապատկեր 10. ՀՀ կառավարության կողմից թողարկված եվրապարտատոմսերի գնանշումները 2015թ. (%)**



## ՀՀ կառավարության վարկերը և փոխառությունները

2015թ. ընթացքում ստորագրվել են 19 նոր վարկային համաձայնագրեր (տվյալները ներկայացված են ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում՝ «Պետական պարտքը» ենթաբաժնում): Նախորդ տարվա համեմատ ՀՀ կառավարության վարկերի ու փոխառությունների ծավալն աճել է 9.2%-ով՝ կազմելով 2,936.2 մլն ԱՄՆ դոլար:

**Գծապատկեր 11. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների կառուցվածքն ըստ վարկատուների 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**




Հաշվետու տարում նախորդ տարվա համեմատությամբ վարկատուների շարքում ավելացել են Եվրասիական Զարգացման Բանկը, Չինաստանի Արտահանման - Ներմուծման Բանկը և Ռուսաստանի Դաշնությունը: ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների



կառուցվածքում նախորդ տարվա համեմատ իրենց մասնաբաժինները պահպանել են Արուհարիի Ջարգացման Հիմնադրամը և ԿԲՍ Բանկը (Բելգիա), իսկ ավելացրել են Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկը՝ 2.3 տոկոսային կետով և Ասիական Ջարգացման Բանկը՝ 1.9 տոկոսային կետով: Միաժամանակ իրենց մասնաբաժինները նվազեցրել են Ջարգացման Միջազգային Ընկերակցությունը՝ 5.7 տոկոսային կետով և Ճապոնիան՝ 1.2 տոկոսային կետով: Մնացած վարկատուների մոտ գրանցվել են մասնաբաժինների մինչև մեկ տոկոսային կետով փոփոխություններ:

**Գծապատկեր 12. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների արժույթային կառուցվածքը 1999-2015թթ.**




Նախորդ տարվա համեմատ ԱՄՆ դոլարով ստացված վարկերի մասնաբաժինը աճել է 5.9 տոկոսային կետով՝ կազմելով 24.7%, ինչը պայմանավորված է դրանց զուտ ծավալի 220.6 մլն ԱՄՆ դոլարի աճով, որի ազդեցությունը ԱՄՆ դոլարով ստացված վարկերի մասնաբաժնում կազմել է 5.0 տոկոսային կետ, և ՀՀ կառավարության վարկերի արժույթային զամբյուղում ներկայացված արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի արժևորմամբ<sup>1</sup>, որը նպաստել է ԱՄՆ դոլարով ստացված վարկերի մասնաբաժնի 0.9 տոկոսային կետով ավելացմանը:

<sup>1</sup> 31.12.2014թ. դրությամբ 1 SDR = 1.449 USD, 1 EUR = 1.216 USD, 1 JPY = 0.0084 USD  
31.12.2015թ. դրությամբ 1 SDR = 1.386 USD, 1 EUR = 1.093 USD, 1 JPY = 0.0083 USD


Նույն չափով փոփոխվել են մնացած արժույթների մասնաբաժինները, որտեղ SDR-ով, ճապոնական իենով և եվրոյով ստացված վարկերի մասնաբաժինները նվազել են համապատասխանաբար 5.0, 1.2 և 0.4 տոկոսային կետերով, իսկ այլ արժույթների մասնաբաժինը ավելացել է 0.7 տոկոսային կետով:

**Գծապատկեր 13. ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի, EUR-ի, JPY-ի միջին ամսական փոխարժեքների դինամիկան**




2015 թվականի ընթացքում ՀՀ կառավարության կողմից արտաքին աղբյուրներից ներգրաված վարկային միջոցների կառուցվածքում 16.2%-ը կազմել են լողացող տոկոսադրույքով վարկերի գծով կատարված մասհանումները, իսկ 83.8%-ը՝ ֆիքսված: 2015թ. վերջի դրությամբ ՀՀ կառավարության վարկերի ու փոխառությունների կառուցվածքում լողացող տոկոսադրույքով վարկերի մասնաբաժինը կազմել է 16.5%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.4 տոկոսային կետով:

**Գծապատկեր 14. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի 1999-2015թթ.**




Լողացող տոկոսադրույքով վարկերի դրույքաչափի հաշվարկման հիմքում ընկած են Libor և Euribor տոկոսադրույքները, որոնց վարքագիծը կախված է միջազգային ֆինանսական շուկայում առկա իրավիճակից և խիստ տատանողական է (գծապատկեր 15):

**Գծապատկեր 15. 6-ամսյա USD Libor-ի և Euribor-ի միջին ամսական դրույքաչափերի դինամիկան**



ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների կառուցվածքում 2009 թվականից արձանագրվել է առևտրային վարկերի տեսակարար կշռի էական աճ: 2015 թվականի տարեվերջի դրությամբ առևտրային վարկերի տեսակարար կշիռը նախորդ տարվա նկատմամբ կրկին աճել է՝ 28.8%-ից կազմելով 30.5% (գծապատկեր 16):

**Գծապատկեր 16. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների արտոնյալության դինամիկան 1999-2015թթ.**



Հաշվետու տարվա ընթացքում ամբողջությամբ մարվել է ՀՀ ռեզիդենտից ներգրաված միակ ներքին վարկը:

Ներգրաված փոխառու միջոցների գծով իրականացված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 4-ում:

## **ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը**

2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 476.3 մլն ԱՄՆ դոլար (230.4 մլրդ դրամ) կամ ՀՆԱ-ի 4.6%-ը: Նախորդ տարվա համեմատ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ աճել է 8.3%-ով, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ՝ 0.3 տոկոսային կետով:

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի կառուցվածքում նվազել է ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը՝ նախորդ տարվա 34.1%-ի փոխարեն 2015 թվականին կազմելով 29.6%:<sup>2</sup> Պարտքի կառուցվածքում գերակշռում են ԱՄՀ-ի կողմից տրամադրված վարկերը, որոնց տեսակարար կշիռը պահպանում է նվազման միտումները՝ 2015 թվականին կազմելով 57.4% (273.3 մլն ԱՄՆ դոլար)՝ 2014 թվականի 65.9%-ի (290.1 մլն ԱՄՆ դոլար) դիմաց:

### **Աղյուսակ 10. ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի կառուցվածքը**

	31.12.2014թ.		31.12.2015թ.	
	մլն ԱՄՆ դոլար	%	մլն ԱՄՆ դոլար	%
<b>ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք</b>	<b>440.0</b>	<b>100.0</b>	<b>476.3</b>	<b>100</b>
<i>այդ թվում</i>				
<i>ըստ վարկատերերի</i>				
<i>Միջազգային կազմակերպություններ, որից</i>				
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	290.1	65.9	273.3	57.4
Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ	49.3	11.2	48.0	10.1
Ասիական Ջարգացման Բանկ	7.6	1.7	7.2	1.5
Եվրոպական Ներդրումային Բանկ	-	-	62.3	13.1
<i>Օտարերկրյա պետություններ</i>				
Գերմանիա (KfW)	93.0	21.1	85.6	18.0
<i>ըստ տոկոսադրույքի</i>				
Ֆիքսված տոկոսադրույքով	161.2	36.6	206.8	43.4
լողացող տոկոսադրույքով	278.8	63.4	269.5	56.6
<i>ըստ արժույթի</i>				
SDR	297.6	67.7	280.5	58.9
USD	49.3	11.2	110.3	23.1
EUR	93.0	21.1	85.6	18.0

2015թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտաքին վարկատուների հետ նոր վարկային համաձայնագրեր չեն կնքվել:

2015թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկն արտաքին աղբյուրներից ստացել է 89.0 մլն ԱՄՆ դոլարի փոխառու միջոցներ: Միաժամանակ, արտաքին պարտքի գծով վճարումները կազմել են 35.2 մլն ԱՄՆ դոլար, որից տոկոսավճարները՝ 4.8 մլն ԱՄՆ դոլար, իսկ մայր գումարի մարումները՝ 30.4 մլն ԱՄՆ դոլար (Հավելված 5):


<sup>2</sup> Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի, ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկերը հաշվառվում են ՀՀ կենտրոնական բանկի պարտքի մեջ:

## Կանխիկ հոսքերի կառավարումը


2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գանձապետական միասնական հաշվի ընդհանուր միջոցները (գանձապետական միասնական հաշիվ և ժամկետային ավանդներ) կազմել են 119.5 մլրդ դրամ՝ 2014թ. 106.6 մլրդ դրամի դիմաց: 2015թ. ընթացքում միասնական հաշվի միջին օրական մնացորդը կազմել է 106.7 մլրդ դրամ, որից տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկում ներդրված ժամկետային ավանդների միջին օրական մնացորդը կազմել է 83.2 մլրդ դրամ:

Հաշվի առնելով 2015թ. արտաքին տնտեսական գործոնների բացասական ազդեցությամբ ծրագրված տնտեսական աճ ապահովելու ռիսկերը և դրանց հնարավոր անդրադարձը պետական բյուջեի ցուցանիշների վրա՝ տարվա ընթացքում պետական բյուջեի կատարումն անխափան ապահովելու նպատակով 2015թ. մարտ ամսին նախաձեռնվել է 500 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով եվրապարտատոմսերի թողարկում, որից ստացված հասույթից 200 մլն ԱՄՆ դոլարն ուղղվել է 2013թ. թողարկված եվրապարտատոմսերի հետզնմանը: Արդյունքում 2015թ. արտարժույթային պարտատոմսերի տեղաբաշխումից զուտ մուտքը ՀՀ պետական բյուջե կազմել է 135.7 մլրդ դրամ: Նման մեծածավալ մուտքի առկայությունը պետական բյուջեում ապահովել է հաշվետու ժամանակահատվածում ներդրվող ժամկետային ավանդների գերակշիռ մասը:

**Գծապատկեր 17. ԳՄՀ օրական մնացորդի (առանց ավանդների) և ընդհանուր միջոցների դինամիկան 2015թ. (մլն դրամ)**



**Գծապատկեր 18. ԳՄՀ (առանց ավանդների) միջին մնացորդը և ժամկետային ավանդների միջին մնացորդը (մլն դրամ)**



Գծապատկերը ցույց է տալիս, որ առանց ավանդների ԳՄՀ մնացորդը 2015թ. նվազել է 2014թ. համեմատությամբ, ինչը վկայությունն է այն բանի, որ 2015թ. ԳՄՀ ընդհանուր միջոցներն առավել ակտիվ են կառավարվել և հարաբերականորեն ավելի քիչ միջոցներ են պահվել գանձապետական միասնական հաշվում, որի մնացորդի դիմաց տոկոսներ չեն ստացվում: 2015թ. ներդրված ժամկետային ավանդների միջին օրական մնացորդը 2014թ. համեմատ նվազել է 19.3 մլրդ դրամով կամ 18.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- ներդրված ավանդների նշանակալի մասի աղբյուրը կայունացման հաշվի միջոցներն են, որոնք 2015թ. տարեսկզբին 4.8 անգամ պակաս են եղել 2014թ. տարեսկզբի միջոցների համեմատ (վերջիններիս գերակշիռ մասը կազմել է ՀՀ կողմից 2013թ. սեպտեմբերին թողարկված 700 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով եվրապարտատոմսերի թողարկումից ստացված հասույթը), իսկ ՀՀ կողմից 2015թ. մարտին թողարկված եվրապարտատոմսերի 135.7 մլրդ դրամ զուտ հասույթի զգալի մասը՝ 86.3 մլրդ դրամը օգտագործվել է տարվա ընթացքում՝ նվազեցնելով 2015թ. ավանդադրվող միջոցների ծավալը,
- եռամսյակային համամասնություններով հաստատված ծրագրային ցուցանիշների նկատմամբ 2015թ-ին ՀՀ պետական բյուջեի ծախսերի փաստացի տնտեսումները գրեթե կրկնակի պակաս են եղել 2014թ. արձանագրված խնայողությունների ծավալից՝ որը մեծամասամբ պայմանավորված է եղել 2014թ. պետական բյուջեի ցուցանիշներում նախատեսված և այնուհետև մասամբ հետաձգված կենսաթոշակային բարեփոխումների իրականացման հետ,

- եթե 2014թ. ընթացքում ԾԻԳ-երի կողմից նախատեսված ծախսերն իրականացվել են զգալի թերակատարումներով և առաջացրել են շոշափելի խնայողություններ, ապա 2015թ. ընթացքում գրանցվել է ԾԻԳ-երի ծախսերի կատարման համեմատաբար բարձր ցուցանիշներ:

**Աղյուսակ 11. ԳՄՀ ցուցանիշները (մլրդ դրամ)**

	2014	2015
ԳՄՀ մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	106.6	119.5
ՀՀ ԿԲ-ում ժամկետային ավանդների միջին օրական մնացորդը	102.5	83.2
ՀՀ ԿԲ-ում ներդրված ժամկետային ավանդների կառավարումից ստացված եկամուտը	8.3	9.7

2015թ. ընթացքում ժամկետային ավանդների միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 11.44%՝ նախորդ տարվա 7.36%-ի դիմաց: Ավանդների տոկոսադրույքների աճն արտահայտում է 2015թ. ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակի հետևանքով պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի դեպի վեր տեղաշարժը: Թեև 2015թ. ՀՀ ԿԲ-ում ներդրված ժամկետային ավանդների միջին մնացորդը նվազել է նախորդ տարվա նկատմամբ, տոկոսադրույքների մակարդակի աճի շնորհիվ պետական բյուջե է մուտքագրվել 1.4 մլրդ դրամով ավել տոկոսային եկամուտ՝ 9.7 մլրդ դրամ:




## Ռիսկերի վերլուծությունը

Հաշվետվության այս մասում դիտարկվել են պետական պարտքի հետ կապված հիմնական ռիսկերը՝ շուկայական ռիսկերը (տոկոսադրույքի, փոխարժեքի, իրացվելիության և վերաֆինանսավորման) և գործառնական ռիսկերը:

Ինչպես նախորդ տարիներին, 2015թ. ևս ՀՀ ՖՆ-ն միջոցներ է ձեռնարկել կառավարության պարտքի կառավարման հետ կապված ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ, որի արդյունքում ՀՀ կառավարության պարտքը մնացել է կառավարելիության շրջանակներում:

2015թ. փոփոխություն կատարվեց «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում, որի համաձայն 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված սահմանափակումները, որոնք նախկինում վերաբերում էին պետական պարտքին, վերագրվեցին կառավարության պարտքին, քանի որ օրենքով նախատեսված կարգավորումներն առնչվում են բյուջետային գործընթացին և պետական բյուջեի դեֆիցիտի առավելագույն սահմանաչափի նախատեսմամբ կարելի է կարգավորել միայն կառավարության կողմից պարտքային նոր պարտավորությունների ներգրավման հնարավորությունը: Օրենքի այս փոփոխությունը նաև միջազգային լավագույն փորձի արտացոլումն է, որը հնարավորություն է ընձեռում մեր երկրի ցուցանիշները համադրելի դարձնել այլ երկրների համանման ցուցանիշների հետ:

### Գծապատկեր 19. ՀՀ կառավարության պարտք/նախորդ տարվա ՀՆԱ\* ցուցանիշի դինամիկան



\*ՀՆԱ-ի հաշվարկման առանձնահատկությունները ներկայացված են «Հապավումներ» բաժնում:

ՀՀ կառավարության պարտք/նախորդ տարվա ՀՆԱ ցուցանիշը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 46.1%՝ նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ ավելանալով 4.4 տոկոսային կետով:

2015թ. հուլիսի 8-ի թիվ 755-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատեց 2016-2018թթ. ՄԺԾ-ն, որում ներառված է նաև ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2016-2018թթ. ռազմավարական ծրագիրը: Ռազմավարական փաստաթղթում սահմանվել են կառավարության պարտքի 2015թ. ծրագրային և 2016-2018թթ. կանխատեսումային ցուցանիշները:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2016-2018թթ. ռազմավարական ծրագրով որպես ուղենշային ցուցանիշներ են սահմանվել ՀՀ կառավարության պարտքի «Մինչև մարում միջին ժամկետի» և «Դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների)» ցուցանիշները:

**Աղյուսակ 12. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշները 2015թ.**

	<b>Ուղենշային</b>	<b>Փաստ</b>
Մինչև մարում միջին ժամկետ, (տարի)	8 – 11	9.7
Դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների), (%)	≥ 25	4.4

2015թ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման արդյունքում փաստացի ապահովվել է «Մինչև մարում միջին ժամկետի» ուղենշային ցուցանիշը, իսկ «Դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների)» ցուցանիշի շեղումը հիմնականում պայմանավորված է եղել ՀՀ դրամի կտրուկ արժեզրկման պատճառով իրացվելիության կրճատման արդյունքում ՊՊ-երի նկատմամբ պահանջարկի բացակայության պայմաններում նոր եվրապարտատոմսերի թողարկման միջոցով ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների) դեֆիցիտի ֆինանսավորման ծրագրի նվազեցմամբ:

**Տոկոսադրույքի ռիսկ**

Աղյուսակ 13-ում ներկայացված են ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/ՀՆԱ փաստացի ցուցանիշները՝ համեմատելով ՀՀ 2015թ. պետական բյուջեով հաստատված և 2016-2018թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով

նախատեսված ցուցանիշի հետ:

**Աղյուսակ 13. ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճարները**

	2014	2015	2015
	փաստ	ծրագիր	փաստ
Տոկոսավճար/ՀՆԱ (%)	1.28	1.52	1.47

Կառավարության պարտքի աճին զուգահեռ աճում են նաև դրա հետ կապված տոկոսային ծախսերը: 2016-2018թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով նախատեսված և փաստացի կատարված տոկոսային ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ նվազել են՝ պայմանավորված ՀՆԱ-ի ծրագրային ցուցանիշից բարձր լինելու հանգամանքով:

**Աղյուսակ 14. Պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման տոկոսադրույքները**

	2014	2015
	փաստ	փաստ
Տվյալ տարում տեղաբաշխված ՊՊ-երի միջին կշռված եկամտաբերությունը (%)	9.78	14.61

2015թ. ընթացքում արձանագրվել է ներքին պարտքի ներգրավման նպատակով թողարկված պետական պարտատոմսերի տոկոսադրույքների աճ: Դրամի արժեզրկման հետևանքով տարեսկզբին ՊՊ-երի նկատմամբ պահանջարկի զգալի նվազումը հանգեցրեց տոկոսադրույքների կտրուկ աճի, որը, շնորհիվ ՊՊ-երի թողարկումների և հետզնումների ճշգրտված ծրագրի և առաջնային գործակալների հետ սերտ համագործակցության, տարվա երկրորդ կեսից կայունացել է՝ տարեվերջին դրսևորելով նվազման միտումներ:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարման տեսակետից կարևորվում է լողացող տոկոսադրույքով պարտքի ծավալների աճի սահմանափակումը:

**Աղյուսակ 15. ՀՀ կառավարության ֆիքսված և լողացող պարտքի տեսակարար կշիռները**

	2014	2015	2015
տոկոս	փաստ	ծրագիր	փաստ
ֆիքսված	89.2	88.0	89.5
լողացող	10.8	12.0	10.5

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2016-2018թթ. ռազմավարական ծրագրում լողացող և ֆիքսված տոկոսադրույքների տեսակարար կշիռների կանխատեսումային մեծությունը 2015թ. վերջի դրությամբ առկա պետական պարտքում սահմանվել էր 12.0/88.0 համամասնությամբ: Փաստացի, ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ավելացել է ֆիքսված տոկոսադրույքով պարտավորությունների ցուցանիշը, որտեղ մեծ դեր է կատարել ֆիքսված տոկոսադրույքով եվրապարտատոմսերի թողարկումը, ինչպես նաև այդ աճին նպաստել են 2015թ. պետական բյուջեով չնախատեսված ֆիքսված տոկոսադրույքով մի շարք վարկերի գծով կատարված փաստացի մասհանումները:

**Աղյուսակ 16. ՀՀ կառավարության պարտքի տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները 2015թ.**

	2015	2015
	ծրագիր	փաստ
ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը (տարի)	7.9	8.4
արտաքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	8.3	9.0
ներքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	5.6	5.7
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%)	16.7	14.4
մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող արտաքին պարտքի կշիռը (%)	16.2	14.3
մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ներքին պարտքի կշիռը (%)	19.2	14.8

Փաստացի բարելավվել են ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրով սահմանված տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները, որտեղ ավելացել է մինչև վերաֆիքսում միջին ժամկետը և, միաժամանակ, նվազել է մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող պարտքի կշիռը:


## **Փոխարժեքի ռիսկ**

Փոխարժեքի ռիսկի նվազեցման նպատակով ՀՀ ՖՆ-ն համաձայնագիր է ստորագրել ՀՀ ԿԲ-ի հետ, որի համաձայն, բյուջետային տարվա ընթացքում տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված արտարժույթով կատարվող կառավարության պարտքի գծով մուտքերն ու ելքերը փոխարկվում են տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի (երթ այն ուժի մեջ չի մտել, ապա նախագծի) ցուցանիշների հաշվարկման հիմքում դրված՝ ՀՀ կառավարության բյուջետային ուղերձում ներկայացված փոխարժեքներով, իսկ ուղերձում չներկայացված այլ արտարժույթով փոխարկումներն իրականացվում են՝ հիմք ընդունելով ուղերձում ներկայացված ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ և փոխարկումն իրականացնելու օրվան նախորդող օրվա դրությամբ փոխարկվող արտարժույթի գծով ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքները: Բյուջետային մուտքերի այն մասը, որն արտարժույթի ստացման օրվա դրությամբ տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված չէ, փոխարկվում է նույն օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված արտարժույթի առքի փոխարժեքով, իսկ չնախատեսված բյուջետային ելքերը՝ վաճառքի փոխարժեքով:

Համաձայնագիրը կառավարությանը հնարավորություն է տվել ֆիքսել կառավարության պարտքի գծով արտարժույթային վճարումների հետ կապված փոխարժեքները՝ դրանք դարձնելով ավելի կառավարելի: Համաձայնագիրը չի նվազեցնում արտաքին պետական պարտքի գծով երկրի ունեցած փոխարժեքի ռիսկը, այլ նման ռիսկերը կառավարության հաշվեկշռից տեղափոխում է ՀՀ ԿԲ հաշվեկշիռ՝ պետական բյուջեի կատարումը դարձնելով ավելի կանխատեսելի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կենտրոնական բանկի մասին օրենքի հոդված 12-ի 3-րդ մասի համաձայն, ֆինանսական տարվա արդյունքում ՀՀ ԿԲ ստացած շահույթի մնացորդը, օրենքով նախատեսված բոլոր մասհանումները կատարելուց հետո, փոխանցվում է պետական բյուջե, ՀՀ կառավարությունը շարունակում է անուղղակի կերպով կրել պետական պարտքի գծով արտարժույթային վճարումների հետ կապված և փոխարժեքով պայմանավորված ռիսկերը:

ՀՀ դրամի փոխարժեքները 2015թ. (յուրաքանչյուր ամսվա միջինը) ներկայացված են գծապատկեր 19-ում:

**Գծապատկեր 20. ՀՀ դրամի փոխարժեքները ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 2015թ-ին**



2015թ. ընթացքում ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքների կտրուկ տատանումներ չեն արձանագրվել: 85.6% արտարժույթային պարտքի կշռի պայմաններում փոխարժեքի էական տատանումները (ՀՀ դրամի արժեզրկման ուղղությամբ) կարող են բացասական ազդեցություն ունենալ կառավարության պարտքի ցուցանիշների, մասնավորապես՝ դրամով արտահայտված պարտքի ծավալի վրա:

**Աղյուսակ 17. ՀՀ կառավարության արտաքին պարտքը**

	2014	2015
ՀՀ կառավարության արտաքին պարտք (մլրդ ՀՀ դրամ)	1,588.9	1,857.5
ՀՀ կառավարության արտաքին պարտք (մլն ԱՄՆ դոլար)	3,345.3	3,839.9
ԱՄՆ դոլարի փոխարժեքը տարվա վերջում	474.97	483.75

2015թ. վերջի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին պարտքն աճել է ինչպես դոլարային, այնպես էլ դրամային արտահայտությամբ:

**Աղյուսակ 18. ՀՀ կառավարության պարտքի արժույթային կառուցվածքը**

	2014	2015
տոկոս	փաստ	փաստ
<b>Արժույթային կառուցվածքը</b>	100.0	100.0
այդ թվում՝		
ՀՀ դրամով արտահայտված պարտք	15.3	14.4
Արտարժույթով արտահայտված պարտք	84.7	85.6
այդ թվում՝		
USD	30.2	37.5
SDR	40.9	35.7
EUR	7.2	6.6
JPY	6.3	5.2
AED	0.1	0.1
CNY	-	0.4

Նախորդ տարվա համեմատ 2015թ. տարեվերջին ՀՀ դրամով արտահայտված պարտքի կշիռը ՊՊ-երի թողարկումների ծավալի կրճատման հետևանքով նվազել է, որն, ինչպես նշվել է, արդյունք է եղել 2015թ. մարտին թողարկված եվրապարտատոմսերի տեղաբաշխումից ստացված հասույթի հաշվին պետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման ծրագրի պակասեցման, իսկ արտարժույթով արտահայտված պարտքի մեջ ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքի կշիռն ավելացել է, քանի որ եվրապարտատոմսերը տեղաբաշխվել են ԱՄՆ դոլարով, և իրականացվել են ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի գծով խոշոր մասհանումներ:


Երկարաժամկետ հեռանկարում ՀՀ կառավարությունը պետական արժեթղթերի շուկայի զարգացման միջոցով, ստեղծված հնարավորությունների սահմաններում, մեծացնելու է դրամով արտահայտված պարտքի կշիռը, քանի որ դա նվազեցնում է փոխարժեքի հետ կապված ռիսկերը:

**Վերաֆինանսավորման ռիսկ**

Վերաֆինանսավորման ռիսկը գնահատվում է շրջանառության մեջ գտնվող պարտքի մարումների գրաֆիկի սահունությամբ (այսինքն չկան պարտքի մարման հետ կապված առանձին ծանր ժամանակահատվածներ), մինչև մարում մնացած միջին ժամկետի մեծության, ընդհանուր պարտքում կարճաժամկետ պարտքի տեսակարար կշռի և այլ ցուցանիշների միջոցով: 2015թ. ընթացքում առկա են եղել վերաֆինանսավորման հետ կապված որոշակի ռիսկեր, սակայն դրանք գտնվել են կառավարելիության շրջանակներում: Մարտ ամսին

կատարված մարումների 86%-ը եղել է 2015թ. թողարկված եվրապարտատոմսերի հասույթի հաշվին 2013թ. թողարկված եվրապարտատոմսերի 700 մլն ԱՄՆ դոլար շրջանառության ծավալից 200 մլն ԱՄՆ դոլար ծավալի հետգնումը, որը չի պարունակել վերաֆինանսավորման հետ կապված ռիսկեր: 2015թ. կառավարության պարտքի գծով մարումների գրաֆիկը ներկայացված է գծապատկեր 20-ում:

**Գծապատկեր 21. Կառավարության պարտքի գծով 2015թ. մարումների գրաֆիկը (մլրդ դրամ)**



Նշենք, որ ներկայումս ՎՋՄԲ-ի և ԱՋԲ-ի կողմից Հայաստանին լողացող տոկոսադրույքով տրամադրվող վարկերի դեպքում վարկային համաձայնագրերով ամրագրված են համապատասխան դրույթներ, որոնք վարկառուին հնարավորություն են ընձեռում ռիսկերը նվազեցնելու նպատակով կիրառել հեջավորման գործիքներ, մասնավորապես փոխարկել վարկի ամբողջ գումարի կամ դրա մի մասի արժույթը մեկ այլ արժույթի, ֆիքսել վարկի օգտագործված և չմարված գումարի նկատմամբ կիրառվող լողացող տոկոսադրույքը, սահմանել տոկոսադրույքի առավելագույն սահմանաչափ: Հավելենք նաև, որ վերը նշված միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկվող գործիքները հնարավորություն են տալիս վարկառուին, մինչև վարկային համաձայնագրի կնքումը, մոդելավորել մայր գումարի մարման ժամանակացույցերը՝ մեղմելու վերաֆինանսավորման հետ կապված ռիսկերը:



**Աղյուսակ 19. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ մինչև մարումը մնացած միջին ժամկետայնության**

	2014	2015
տոկոս	փաստ	փաստ
<b>Կառուցվածքն ըստ մինչև մարումը մնացած միջին ժամկետայնության, %</b>	100.0	100.0
որից՝		
Կարճաժամկետ (մինչև 1 տարի)	3.2	2.5
Միջնաժամկետ (1-5 տարի)	10.2	21.8
Երկարաժամկետ (5-ից ավելի տարի)	86.6	75.7

ՀՀ կառավարության պարտքի կառավարման արդյունքում հաջողվել է կարճաժամկետ պարտքի կշիռը նախորդ տարվա 3.2%-ից կրճատել մինչև 2.5%՝ նվազեցնելով վերաֆինանսավորման ռիսկը:

Ստորև ներկայացվում է նաև ՊՊ-երի ցուցանիշների միտումները նախորդ տարվա համեմատ:

**Աղյուսակ 20. Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի տվյալները**


	2014	2015
Տոկոսադրույքը (%)	13.49	13.99
Մինչև մարում միջին ժամկետը (տարի)	5.5	5.7
Առաջիկա տարում մարվող պարտատոմսերի տեսակարար կշիռը ընդամենը պարտատոմսերում (տոկոս)	19.5	17.1
Դյուրացիան (տարի)	3.3	3.0

Չնայած 2015թ. նախորդ տարվա համեմատ 0.5 տոկոսային կետով աճել է շրջանառության մեջ գտնվող ՊՊ-երի տոկոսադրույքը, սակայն միաժամանակ աճել է մինչև մարում ընկած միջին ժամկետը, և նվազել է առաջիկա տարում մարվող պարտատոմսերի տեսակարար կշիռը ընդամենը պարտատոմսերում ցուցանիշը՝ նպաստելով վերաֆինանսավորման ռիսկի նվազմանը: Տոկոսադրույքների աճը հանգեցրել է ՊՊ-երի դյուրացիայի նվազմանը՝ որոշակիորեն ավելացնելով վերաֆինանսավորման ռիսկը:

2015թ. տարեվերջի դրությամբ ձևավորված կառավարության արտաքին պարտքի մարումները սփռված են մինչև 2050 թվականը, իսկ ներքին պարտքինը՝ մինչև 2032

թվականը:

**Գծապատկեր 22. Կառավարության պարտքի գծով մարումների գրաֆիկը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)**



2020թ. կառավարության պարտքի մարումների 71.7%-ը կազմում է 2013թ. թողարկված 7 տարի մարման ժամկետով եվրապարտատոմսերի մարումը, իսկ 2025թ. կառավարության պարտքի մարումների 75.7%-ը՝ 2015թ. թողարկված 10 տարի մարման ժամկետով եվրապարտատոմսերի մարումը:

2016-2018թթ. ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրում ՀՀ կառավարությունը սահմանել էր վերաֆինանսավորման ռիսկի հետևյալ թիրախային ցուցանիշները՝

**Աղյուսակ 21. ՀՀ կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկի ցուցանիշները 2015թ.**

	2015 ծրագիր	2015 փաստ
ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը (տարի)	9.5	9.7
արտաքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	10.2	10.6
ներքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	5.6	5.7
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքը (%)	4.6	4.0
մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը (%)	1.9	1.8
մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռը (%)	19.2	14.8

Վերաֆինանսավորման ռիսկի կառավարման տեսակետից ՀՀ կառավարությանը հաջողվել է բարելավել ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշները, որտեղ <<<< կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետի>> ցուցանիշը դրսևորել է աճի միտում, իսկ <<Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի>> ցուցանիշը՝ նվազման միտում: Երկու ցուցանիշների փաստացի տվյալները վկայում են, որ 2015թ. ընթացքում ՀՀ կառավարությանը հաջողվել է մեղմել վերաֆինանսավորման ռիսկը:

**Գործառնական ռիսկ**

ՀՀ ֆինանսների նախարարությունը աշխատանքներ է իրականացնում ՀՀ կառավարության պարտքի կառավարման հետ կապված գործառնական ռիսկերը բացահայտելու, գնահատելու, կառավարելու և նվազեցնելու ուղղությամբ: Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար կներկայացվի հաշվետվություններում:

## **Հավելված 1. Պետական պարտատոմսերով կատարված գործարքները 2015թ-ին**

2015 թվականին թողարկվել են 3, 5 և 10 տարի մարման ժամկետներով համապատասխանաբար 40 մլրդ, 40 մլրդ և 50 մլրդ դրամ ծավալով նոր ուղենշային պարտատոմսեր:

### **Աղյուսակ 1.1. Շուկայական պարտատոմսերով իրականացված գործառնությունները 2015թ-ին**

	ՊԿՊ	ՄԺՊ	ԵՊ	Ընդամենը
Աճուրդների քանակը (հատ)	47	17	12	76
Թողարկման ծավալը (մլրդ դրամ)	48.0	59.0	42	149
Տեղաբաշխման ծավալը (մլրդ դրամ)	47.9	57.9	38.1	144
Կշիռը տեղաբաշխման ծավալի մեջ	33.3%	40.2%	26.5%	100%
Մեկ թողարկման միջին ծավալը (մլրդ դրամ)	1.02	3.47	3.50	1.96

- Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը կազմել է 249 մլրդ դրամ և տեղաբաշխման ենթակա ծավալը գերազանցել է 1.67 անգամ,
- տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 2085 օր,
- տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 14.61 %,
- տեղաբաշխումների առավելագույն ժամկետայնությունը՝ մինչև 2032թ.,
- տեղաբաշխումների նվազագույն ժամկետայնությունը եղել է 5 շաբաթ:

2015թ-ի ընթացքում ՀՀ ՖՆ-ն իրականացրել է ՊՊ-երի հետգնումներ՝ 30.45 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որից 18.93 մլրդ դրամ ծավալով հետգնումներն իրականացվել են հունվար-մարտ ամիսներին՝ փոխանակման ծրագրի շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել ԽՊ-երի 35 թողարկում՝ 1.9 մլրդ դրամ ծավալով, որից տեղաբաշխվել է 917.4 մլն դրամը:

**Աղյուսակ 1.2. 2015թ-ին կայացած պետական պարտատոմսերի աճուրդների տվյալները (մլն դրամ)**

Ամսաթիվ	Պարտատոմս	Աճուրդի ծավալ	Պահանջ արկ	Տեղաբաշխում	Նվազագույն եկամամտաբեր ություն	Սահմանային եկամտաբերութ յուն	Միջին կշռված եկամտաբերութ յուն	Մարման օր
<b>Ընդամենը հունվար</b>		-	-	-			-	
2-ՓՏՎ-2015	ՊԿՊ26	3,000	5,543	3,000	12.9897	17.0000	16.4743	3-ՕԳՍ-2015
5-ՓՏՎ-2015	ՊԿՊ26	3,000	8,603	3,000	16.3000	16.9998	16.7457	6-ՕԳՍ-2015
13-ՓՏՎ-2015	ՊԿՊ39	4,000	7,187	4,000	13.8999	14.9999	14.7129	13-ՆՈՅ-2015
20-ՓՏՎ-2015	ՊԿՊ13	3,000	5,488	3,000	13.5000	14.4998	14.3188	22-ՄՅՍ-2015
27-ՓՏՎ-2015	ՊԿՊ13	4,000	5,178	4,000	14.1000	14.5000	14.4056	29-ՄՅՍ-2015
<b>Ընդամենը փետրվար</b>		<b>17,000</b>	<b>31,999</b>	<b>17,000</b>			<b>15.2406</b>	
6-ՄՐՏ-2015	ՊԿՊ52	1,500	5,045	1,500	14.0900	14.2400	14.1698	4-ՄՐՏ-2016
9-ՄՐՏ-2015	ՊԿՊ39	500	1,522	500	13.9498	14.0000	13.9799	7-ԴԵԿ-2015
13-ՄՐՏ-2015	ՊԿՊ26	1,500	3,860	1,500	13.4000	13.9499	13.6919	11-ՍԵՊ-2015
16-ՄՐՏ-2015	ՊԿՊ52	1,000	2,501	1,000	13.4820	13.7990	13.6888	14-ՄՐՏ-2016
16-ՄՐՏ-2015	ՄԱՊ36	3,000	5,370	3,000	13.4000	14.4400	14.0466	29-ԱՊՐ-2017
16-ՄՐՏ-2015	ԵԱՊ20	3,000	4,112	3,000	15.8900	16.1900	16.0103	17-ՓՏՎ-2032
20-ՄՐՏ-2015	ՊԿՊ39	1,500	3,648	1,500	13.3900	13.7000	13.4895	18-ԴԵԿ-2015
23-ՄՐՏ-2015	ՊԿՊ13	500	554	500	13.1500	13.5999	13.4760	22-ՀՆՍ-2015
27-ՄՐՏ-2015	ՊԿՊ39	1,500	2,095	1,500	12.2900	13.4700	12.9305	25-ԴԵԿ-2015
<b>Ընդամենը մարտ</b>		<b>14,000</b>	<b>28,707</b>	<b>14,000</b>			<b>14.2150</b>	
<b>Ընդամենը I եռամսյակ</b>		<b>31,000</b>	<b>60,706</b>	<b>31,000</b>				
10-ԱՊՐ-2015	ՊԿՊ52	500	1,273	500	13.0000	13.1000	13.0235	8-ԱՊՐ-2016

13-ԱՊՐ-2015	ՊԿՊ39	500	911	500	12.6900	13.0900	12.8457	11-ՀՆՎ-2016
14-ԱՊՐ-2015	ՄԱՊ60	3,000	7,616	3,000	14.1990	14.3813	14.3497	29-ԱՊՐ-2019
20-ԱՊՐ-2015	ՊԿՊ26	500	1,460	500	12.7899	12.8500	12.8238	19-ՀՈԿ-2015
21-ԱՊՐ-2015	ՄԱՊ36	3,000	7,078	3,000	13.4900	13.8808	13.7646	29-ԱՊՐ-2017
27-ԱՊՐ-2015	ՊԿՊ13	500	630	500	12.6489	12.8100	12.7354	27-ՀԼՍ-2015
29-ԱՊՐ-2015	ԵԱՊ20	4,000	4,375	4,000	16.0700	16.4900	16.4076	17-ՓՏՎ-2032
29-ԱՊՐ-2015	ԵԱՊ10	4,000	2,525	1,625	14.9700	15.9800	15.5644	29-ՀՈԿ-2023
29-ԱՊՐ-2015	ՄԱՊ60	4,000	3,360	2,930	14.4002	15.0700	14.8220	29-ԱՊՐ-2020
29-ԱՊՐ-2015	ՄԱՊ36	4,000	5,094	4,000	13.8000	14.2989	14.0885	29-ԱՊՐ-2018
<b>Ընդամենը ապրիլ</b>		<b>24,000</b>	<b>34,322</b>	<b>20,555</b>			<b>14.6321</b>	
4-ՄՅՍ-2015	ՊԿՊ52	500	978	500	12.8989	12.9700	12.9184	2-ՄՅՍ-2016
11-ՄՅՍ-2015	ՊԿՊ39	500	923	500	12.7500	12.9189	12.8428	8-ՓՏՎ-2016
14-ՄՅՍ-2015	ԵԱՊ10	2,000	4,712	2,000	15.4700	15.7700	15.6152	29-ՀՈԿ-2023
18-ՄՅՍ-2015	ՊԿՊ26	500	1,653	500	12.6489	12.6900	12.6740	16-ՆՈՅ-2015
19-ՄՅՍ-2015	ՄԱՊ36	3,000	5,480	3,000	13.9700	14.2100	14.0895	29-ԱՊՐ-2018
25-ՄՅՍ-2015	ՊԿՊ13	500	1,000	500	12.4222	12.4400	12.4390	24-ՕԳՍ-2015
<b>Ընդամենը մայիս</b>		<b>7,000</b>	<b>14,746</b>	<b>7,000</b>			<b>14.1337</b>	
1-ՀՆԱ-2015	ՊԿՊ52	500	1,297	500	12.4700	12.4700	12.4700	30-ՄՅՍ-2016
8-ՀՆԱ-2015	ՊԿՊ39	500	1,341	500	12.0000	12.3489	12.1243	7-ՄՐՏ-2016
11-ՀՆԱ-2015	ԵԱՊ20	2,000	4,735	2,000	16.0100	16.2100	16.1204	17-ՓՏՎ-2032
15-ՀՆԱ-2015	ՊԿՊ26	500	1,140	500	11.8000	12.2800	12.0338	14-ԴԵԿ-2015

16-ՀՆԱ-2015	ՄԱՊ60	3,000	6,089	3,000	14.4400	14.7900	14.6785	29-ԱՊՐ-2020
22-ՀՆԱ-2015	ՊԿՊ13	500	1,690	500	11.8900	12.0225	11.9623	21-ՍԵՊ-2015
<b>Ընդամենը հունիս</b>		<b>7,000</b>	<b>16,292</b>	<b>7,000</b>			<b>14.3674</b>	
<b>Ընդամենը II եռամսյակ</b>		<b>38,000</b>	<b>65,360</b>	<b>34,555</b>				
<b>Ընդամենը I կիսամյակ</b>		<b>69,000</b>	<b>126,066</b>	<b>65,555</b>				
6-ՀԼԱ-2015	ՊԿՊ52	500	1,340	500	12.0700	12.1700	12.1059	4-ՀԼԱ-2016
14-ՀԼԱ-2015	ՄԱՊ60	4,000	5,146	4,000	14.4750	14.8500	14.6829	29-ԱՊՐ-2020
20-ՀԼԱ-2015	ՊԿՊ26	500	1,218	500	11.7500	11.8900	11.8562	18-ՀՆՎ-2016
21-ՀԼԱ-2015	ՄԱՊ36	4,000	6,555	4,000	13.7520	14.1700	14.0581	29-ԱՊՐ-2018
27-ՀԼԱ-2015	ՊԿՊ13	500	1,347	500	11.4980	11.5980	11.5312	26-ՀՈԿ-2015
<b>Ընդամենը հուլիս</b>		<b>9,500</b>	<b>15,606</b>	<b>9,500</b>			<b>13.9695</b>	
3-ՕԳԱ-2015	ՊԿՊ52	1,000	1,893	1,000	12.0400	12.1490	12.0892	1-ՕԳԱ-2016
10-ՕԳԱ-2015	ՊԿՊ39	500	1,300	500	11.8489	11.9289	11.8648	9-ՄՅԱ-2016
13-ՕԳԱ-2015	ԵԱՊ10	3,000	4,595	3,000	15.0000	15.6400	15.4419	29-ՀՈԿ-2023
17-ՕԳԱ-2015	ՊԿՊ26	500	696	500	11.7384	11.8315	11.7766	15-ՓՏՎ-2016
18-ՕԳԱ-2015	ՄԱՊ36	4,000	7,219	4,000	13.7656	14.0777	13.9942	29-ԱՊՐ-2018
24-ՕԳԱ-2015	ՊԿՊ13	500	389	389	11.4874	11.6006	11.5454	23-ՆՈՅ-2015
<b>Ընդամենը օգոստոս</b>		<b>9,500</b>	<b>16,092</b>	<b>9,389</b>			<b>13.9209</b>	
7-ՍԵՊ-2015	ՊԿՊ52	500	918	500	12.0080	13.0500	12.2179	5-ՍԵՊ-2016
10-ՍԵՊ-2015	ԵԱՊ20	4,000	4,702	4,000	16.3200	16.4897	16.4568	17-ՓՏՎ-2032
15-ՍԵՊ-2015	ՄԱՊ60	3,000	4,137	3,000	14.6000	15.0977	14.9214	29-ԱՊՐ-2020

28-ՍԵՊ-2015	ՊԿՊ26	500	1,047	500	11.8488	11.9645	11.9016	28-ՄՐՏ-2016
<b>Ընդամենը սեպտեմբեր</b>		<b>8,000</b>	<b>10,804</b>	<b>8,000</b>			<b>15.3314</b>	
<b>Ընդամենը III եռամսյակ</b>		<b>27,000</b>	<b>42,502</b>	<b>26,889</b>				
5-ՀՈԿ-2015	ՊԿՊ52	1,000	2,103	1,000	12.0600	12.2499	12.1621	3-ՀՈԿ-2016
12-ՀՈԿ-2015	ՊԿՊ39	1,000	1,378	1,000	11.8400	12.1212	11.9339	11-ՀԼՍ-2016
13-ՀՈԿ-2015	ՄԱՊ60	3,500	4,344	3,500	14.7555	15.1977	14.9993	29-ԱՊՐ-2020
19-ՀՈԿ-2015	ՊԿՊ26	1,000	1,650	1,000	11.7400	11.8300	11.7900	18-ԱՊՐ-2016
20-ՀՈԿ-2015	ՄԱՊ36	3,500	3,706	3,500	13.7012	14.3400	14.0523	29-ԱՊՐ-2018
26-ՀՈԿ-2015	ՊԿՊ13	500	926	500	11.4900	11.5000	11.4949	25-ՀՆՎ-2016
29-ՀՈԿ-2015	ՄԱՊ36	3,500	4,418	3,500	14.0000	14.5111	14.3395	29-ԱՊՐ-2018
29-ՀՈԿ-2015	ՄԱՊ60	3,500	4,012	3,500	14.9500	15.5111	15.2845	29-ԱՊՐ-2020
29-ՀՈԿ-2015	ԵԱՊ10	4,000	4,917	4,000	15.3788	16.1111	15.9205	29-ՀՈԿ-2025
<b>Ընդամենը հոկտեմբեր</b>		<b>21,500</b>	<b>27,453</b>	<b>21,500</b>			<b>14.4502</b>	
2-ՆՈՅ-2015	ՊԿՊ52	1,000	1,283	1,000	12.0500	12.6564	12.2770	31-ՀՈԿ-2016
5-ՆՈՅ-2015	ԵԱՊ20	5,000	8,251	5,000	16.4888	16.8547	16.6261	17-ՓՏՎ-2032
9-ՆՈՅ-2015	ՊԿՊ39	1,000	1,285	1,000	12.1000	12.5000	12.2758	8-ՕԳՍ-2016
12-ՆՈՅ-2015	ԵԱՊ10	4,000	2,888	2,488	16.0500	16.4900	16.2813	29-ՀՈԿ-2025
16-ՆՈՅ-2015	ՊԿՊ26	1,000	1,784	1,000	11.7984	12.0600	11.9689	16-ՄՅՍ-2016
17-ՆՈՅ-2015	ՄԱՊ36	3,000	3,880	3,000	14.1000	14.4800	14.3188	29-ԱՊՐ-2018
19-ՆՈՅ-2015	ԵԱՊ20	5,000	8,235	5,000	16.8100	16.9200	16.8962	17-ՓՏՎ-2032
23-ՆՈՅ-2015	ՊԿՊ13	500	905	500	11.4500	11.7450	11.5657	22-ՓՏՎ-2016



<b>Ընդամենը նոյեմբեր</b>		<b>20,500</b>	<b>28,510</b>	<b>18,988</b>			<b>15.4508</b>	
7-դեկ-2015	ՊԿՊ52	1,000	1,318	1,000	12.3500	12.9000	12.4500	5-դեկ-2016
10-դեկ-2015	ԵԱՊ20	2,000	6,927	2,000	16.5936	16.6999	16.6554	17-ՓՏՎ-2032
14-դեկ-2015	ՊԿՊ39	1,000	1,563	1,000	12.2700	12.6400	12.4993	12-ՍԵՊ-2016
15-դեկ-2015	ՄԱՊ60	4,000	4,691	4,000	15.4000	15.7434	15.4988	29-ԱՊՐ-2020
21-դեկ-2015	ՊԿՊ26	1,000	1,040	1,000	11.9000	12.6400	12.1462	20-ՀՆՍ-2016
24-դեկ-2015	ՊԿՊ26	500	2,176	500	11.4400	11.6997	11.4524	23-ՀՆՍ-2016
24-դեկ-2015	ՊԿՊ05	1,000	5,030	1,000	10.3900	10.3997	10.3904	28-ՀՆՎ-2016
28-դեկ-2015	ՊԿՊ13	500	1,631	500	10.6900	10.8000	10.7760	28-ՄՐՏ-2016
<b>Ընդամենը դեկտեմբեր</b>		<b>11,000</b>	<b>24,376</b>	<b>11,000</b>			<b>13.9915</b>	
<b>Ընդամենը IV եռամսյակ</b>		<b>53,000</b>	<b>80,338</b>	<b>51,488</b>				
<b>Ընդամենը II կիսամյակ</b>		<b>80,000</b>	<b>122,840</b>	<b>78,377</b>				
<b>Ընդամենը տարի</b>		<b>149,000</b>	<b>248,906</b>	<b>143,932</b>			<b>14.6069</b>	

## Հավելված 2. 2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերը (մլն դրամ)

Կարճաժամկետ պարտատոմսեր			Միջին և երկար ժամկետայնության պարտատոմսեր			Ուղենշային պարտատոմսեր				
Շրջանառության ծավալ	Մարման օր		Շրջանառության ծավալ	Արժեկտրոնի եկամտաբերություն	Մարման օր	Շրջանառության ծավալ	Արժեկտրոնի եկամտաբերություն	Մարման օր		
1	500.0	11.01.2016	1	11,312.5	11.0%	29.04.2016	1	19,500.0	8.0%	29.04.2017
2	500.0	18.01.2016	2	21,145.0	10.0%	29.04.2016	2	25,000.0	9.0%	29.04.2018
3	500.0	25.01.2016	3	176.1	10.0%	20.06.2016	3	23,930.0	10.0%	29.04.2020
4	1,000.0	28.01.2016	4	21,310.0	11.0%	29.04.2017	4	14,625.0	10.0%	29.10.2023
5	500.0	08.02.2016	5	560.9	10.0%	19.09.2017	5	18,690.1	11.0%	07.02.2028
6	500.0	15.02.2016	6	21.0	10.0%	20.09.2017	6	57,500.0	13.0%	17.02.2032
7	500.0	22.02.2016	7	12,540.3	10.0%	07.02.2018				
8	1,500.0	04.03.2016	8	12,705.1	12.0%	17.02.2018				
9	500.0	07.03.2016	9	15,999.5	10.0%	29.04.2018				
10	1,000.0	14.03.2016	10	15,690.0	8.0%	29.04.2019				
11	500.0	28.03.2016	11	19,757.0	12.0%	17.02.2021				
12	500.0	28.03.2016	12	1,090.0	10.0%	13.12.2020				
13	1,000.0	18.04.2016	13	184.2	10.0%	19.12.2020				
14	500.0	02.05.2016	14	8.3	10.0%	21.03.2021				
15	500.0	09.05.2016	15	6,488.0	11.0%	29.10.2025				
16	1,000.0	16.05.2016								
17	500.0	30.05.2016								
18	1,000.0	20.06.2016								
19	500.0	23.06.2016								
20	500.0	04.07.2016								
21	1,000.0	11.07.2016								
22	1,000.0	01.08.2016								
23	1,000.0	08.08.2016								
24	500.0	05.09.2016								
25	1,000.0	12.09.2016								
26	1,000.0	03.10.2016								
27	1,000.0	31.10.2016								
28	1,000.0	05.12.2016								

### Պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր

	Թողարկման համարը	Շրջանառության ծավալը (հազար դրամ)	Արժեկտրոնի եկամտաբերություն	Մարման օրը
1	AMGS02032166	12,600	12.5%	03.02.16
2	AMGS02076163	63,900	13.0%	07.06.16
3	AMGS02223161	95,955	12.5%	22.03.16
4	AMGS02224169	56,657	13.0%	22.04.16

5	AMGS04027164	3,800	13.5%	02.07.16
6	AMGS0405B162	29,560	14.0%	05.11.16
7	AMGS0407C168	41,300	14.0%	07.12.16
8	AMGS04108162	15,000	13.5%	10.08.16
9	AMGS04193164	2,000	13.0%	19.03.16
10	AMGS04229166	17,437	13.5%	22.09.16
11	AMGS04234166	2,570	13.0%	23.04.16
12	AMGS04255161	45,700	13.0%	25.05.16
13	AMGS08038175	5,003	14.0%	03.08.17
14	AMGS0803B160	26,230	11.5%	03.11.16
15	AMGS0805B176	13,055	14.5%	05.11.17
16	AMGS08074170	11,800	13.5%	07.04.17
17	AMGS0807C172	15,450	14.5%	07.12.17
18	AMGS08132176	27,837	13.5%	13.02.17
19	AMGS0818C161	900	11.5%	18.12.16
20	AMGS08203167	4,000	11.5%	20.03.16
21	AMGS08215179	800	13.5%	21.05.17
22	AMGS08229170	16,500	14.0%	22.09.17
23	AMGS08247164	3,100	11.5%	24.07.16
24	AMGS08256173	21,250	14.0%	25.06.17
25	AMGS08268160	7,190	11.5%	26.08.16
26	AMGS12016183	38,807	14.0%	01.06.18
27	AMGS1203B172	44,530	12.0%	03.11.17
28	AMGS12049176	15,600	12.0%	04.09.17
29	AMGS1205B188	44,305	15.0%	05.11.18
30	AMGS12066162	23,000	12.5%	06.06.16
31	AMGS1207C184	5,950	15.0%	07.12.18
32	AMGS12097183	10,840	14.5%	09.07.18
33	AMGS12118187	12,040	14.5%	11.08.18
34	AMGS12132188	6,350	14.0%	13.02.18
35	AMGS12158167	4,739	12.5%	15.08.16
36	AMGS12187166	15,657	12.5%	18.07.16
37	AMGS12193180	5,250	14.0%	19.03.18
38	AMGS12229182	29,000	14.5%	22.09.18
39	AMGS12239165	14,000	12.5%	23.09.16
40	AMGS1224A161	8,280	12.5%	24.10.16
41	AMGS1225B168	22,759	12.5%	25.11.16
42	AMGS1225C174	34,200	12.0%	25.12.17
43	AMGS12263165	14,290	13.0%	26.03.16
44	AMGS1226C165	7,840	12.0%	26.12.16
45	AMGS12272166	21,000	13.0%	27.02.16
46	AMGS12272174	7,900	12.0%	27.02.17
47	AMGS12273172	11,000	12.0%	27.03.17
48	AMGS12275177	18,430	12.0%	27.05.17
49	AMGS12276167	10,800	12.5%	27.06.16
50	AMGS12294178	8,550	12.0%	29.04.17
51	AMGS12297171	45,477	12.0%	29.07.17
52	AMGS12304167	12,660	12.5%	30.04.16

### **Հավելված 3. Պետական (գանձապետական) պարտատոմսերի մանրաձախ շուկան 2015թ-ին**

Պետական (գանձապետական) պարտատոմսերի մանրաձախ վաճառքը կազմակերպվում է Գանձապետական պահառու համակարգի միջոցով, որն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից պարտատոմսերի անմիջական վաճառքի, ներդրողներին պատկանող պարտատոմսերի հաշվառման և սպասարկման համակարգ:

Մանրաձախ եղանակով վաճառվում են պետական կարճաժամկետ և խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր: Պարտատոմսերի վաճառքն իրականացվում է Երևան քաղաքում տեղակայված 5 սպասարկման կետերի միջոցով: Խնայողական արժեկտրոնային պարտատոմսերը տեղաբաշխվում են միայն ԳՊ-ի միջոցով ազատ վաճառքի ձևով և վաճառվում են բացառապես ֆիզիկական անձանց:

Խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումը հնարավորություն ընձեռեց զարգացնել և կատարելագործել պետական պարտատոմսերի մանրաձախ շուկան՝ ձևավորելով պետական պարտատոմսերի ամենօրյա առաջարկ: Այս պարտատոմսերը, լինելով ոչ առևտրային, գրավադրման, նվիրատվության և առք ու վաճառքի ենթակա չեն, սակայն մինչև մարումը կարող են հետգնվել գի կողմից: Արժեկտրոնային եկամուտը վճարվում է եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան պարբերականությամբ: Թողարկման ժամկետը կարող է սահմանվել 3 ամսից մինչև 25 տարի: 2015թ. ընթացքում թողարկվել են 6 ամիս (3 ամիս հետո հետգնման իրավունքով), 12 ամիս (9 ամիս հետո հետգնման իրավունքով), 24 ամիս (15, 18 և 21 ամիս հետո հետգնման իրավունքով) և 36 ամիս (27, 30 և 33 ամիս հետո հետգնման իրավունքով) մարման ժամկետով խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր:


2015թ. ընթացքում մանրաձախ շուկայում իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- ԳՊ-ն տեղաբաշխել է ԽՊ-երի 35 թողարկումներից 34-ը և մասնակցել է ՊԿՊ-երի կայացած 36 թողարկումներից 19-ին,
- ներդրման ծավալը կազմել է 2,125.4 մլն դրամ, որից 1,208.0 մլն ՊԿՊ-եր և 917.4 մլն ԽՊ-եր,
- մարվել է 1,865.5 մլն դրամի պարտատոմս, որից 923.3 մլն ՊԿՊ-եր և 565.9 մլն ԽՊ-եր, և հետ է գնվել 376.4 մլն. դրամի ԽՊ-եր,
- 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ է եղել 1,944.8 մլն. դրամի պարտատոմս, որից 912.0 մլն ՊԿՊ-եր և 1,032.8 մլն ԽՊ-եր,
- դեպո հաշիվների քանակը կազմել է 1072,
- տեղաբաշխված ՊԿՊ-երի 2.5% ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով,
- մեկ ներդրողի կողմից ներդրման միջին ծավալը կազմել է 15.5 մլն դրամ (ՊԿՊ-երի գծով այն կազմել է 302.0 մլն դրամ, իսկ ԽՊ-երի գծով՝ 6.9 մլն դրամ),

- ներկայացված հայտերում ներդրման միջին ծավալը կազմել է 9.4 մլն դրամ (ՊԿՊ-երի գծով այն կազմել է 60.4 մլն դրամ, իսկ ԽՊ-երի գծով՝ 4.5 մլն դրամ),
- պարտատոմսերի մեկ թողարկմանը ներկայացվել է միջինը 4.3 հայտ, այդ թվում ՊԿՊ-երի մեկ թողարկմանը ներկայացվել է միջինը 1.1 հայտ, իսկ ԽՊ-երի մեկ թողարկմանը ներկայացվել է միջինը 6.1 հայտ:
- մարված պարտատոմսերից վերաֆինանսավորումը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ աճել է 37.9% և կազմել է 751.8 մլն դրամ:


2015թ. խնայողական պարտատոմսերի ներդրման ծավալը նախորդ տարվա նկատմամբ աճել է 32.9%-ով, իսկ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառված և շրջանառության մեջ գտնվող ԽԱՊ-երի ծավալը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 3.9%-ով (տես գծապատկեր 3.1):

**Գծապատկեր 3.1. Շրջանառության մեջ գտնվող պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի ծավալը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**



2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեպո հաշիվների քանակը 30-ով ավելին է եղել նախորդ տարվա նույն ցուցանիշից (տես գծապատկեր 3.2):

**Գծապատկեր 3.2. Դեպո հաշիվների դինամիկան 2015թ.**



Ինայդդական արժեկտրոնային պարտատոմսերի արժեկտրոնի եկամտաբերությունը սահմանվում է՝ հիմք ընդունելով ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքը և ՀՀ առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքը:

**Հավելված 4. 2015 թվականի ընթացքում ՀՀ կառավարության ներգրաված վարկերի գծով իրականացված գործառնությունները**

		Ստացում		Մայր գումարի մարում		Տոկոսավճար	
		մլն ԱՄՆ դոլար	Մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	Մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	Մլրդ դրամ
<b>Ընդամենը ՀՀ կառավարության վարկերի գծով</b>		<b>409.89</b>	<b>190.90</b>	<b>60.944</b>	<b>25.320</b>	<b>45.367</b>	<b>18.790</b>
<b><i>Միջազգային կազմակերպություններ</i></b>		<b><i>353.97</i></b>	<b><i>164.20</i></b>	<b><i>36.53</i></b>	<b><i>15.28</i></b>	<b><i>38.04</i></b>	<b><i>15.77</i></b>
1	Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ (IBRD)	101.70	45.27	0.29	0.12	3.53	1.49
2	Ջարգացման Միջազգային Ընկերակցություն (IDA)	15.27	7.30	23.92	9.84	23.80	9.79
3	Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկ (EBRD)	1.54	0.74	2.08	0.85	0.65	0.27
4	Եվրոպական Ներդրումային Բանկ (EIB)	25.79	12.46	0.17	0.07	1.21	0.50
5	Գյուղատնտեսության Ջարգացման Միջազգային Հիմնադրամ (IFAD)	2.85	1.37	1.74	0.71	0.45	0.19
6	ՕՊԵԿ-ի Միջազգային Ջարգացման Հիմնադրամ (OFID)	7.66	3.65	1.93	0.79	1.51	0.62
7	Ասիական Ջարգացման Բանկ (ADB)	99.16	45.72	2.08	0.85	3.38	1.48
8	Արժույթի Միջազգային Հիմնադրամ (IMF)	-	-	4.32	2.04	0.03	0.01
9	Եվրամիություն (EU)	-	-	-	-	2.73	1.12
10	Եվրասիական Ջարգացման Բանկ (Կայունացման և Ջարգացման Եվրասիական Հիմնադրամի կառավարիչ)	100.00	47.68	-	-	0.75	0.31
<b><i>Օտարերկրյա պետություններ</i></b>		<b><i>46.75</i></b>	<b><i>22.32</i></b>	<b><i>19.80</i></b>	<b><i>8.14</i></b>	<b><i>6.92</i></b>	<b><i>2.85</i></b>
1	Գերմանիա (KfW)	3.93	1.87	7.32	3.01	3.64	1.50
2	Ֆրանսիա	12.38	5.91	0.15	0.06	0.15	0.06
3	ԱՄՆ	-	-	1.73	0.71	0.48	0.20
4	Ճապոնիա (JICA)	-	-	9.94	4.09	2.32	0.95
5	Աբու-Դաբիի Ջարգացման Հիմնադրամ	1.33	0.63	0.67	0.27	0.21	0.09
6	Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	21.34	10.17			0.11	0.05

7	Ռուսաստանի Դաշնություն	7.77	3.74				
<b>Առևտրային բանկեր</b>		<b>9.18</b>	<b>4.38</b>	<b>4.61</b>	<b>1.90</b>	<b>0.41</b>	<b>0.17</b>
1	ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.66	0.32	0.61	0.25	0.05	0.02
2	Ռայֆազն Բանկ (Ավստրիա)	-	-	-	-	0.10	0.04
3	Էռստե Բանկ (Ավստրիա)	8.53	4.06	-	-	0.16	0.06
4	ՎՏԲ-Հայաստան Բանկ (Հայաստան)	-	-	4.00	1.64	0.10	0.05



**Հավելված 5. 2015 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի ներգրաված վարկերի գծով իրականացված գործառնությունները**

		Ստացում	Մայր գումարի մարում	Տոկոսավճար
		մլն ԱՄՆ դոլար	մլն ԱՄՆ դոլար	մլն ԱՄՆ դոլար
<b>Ընդամենը ՀՀ կենտրոնական բանկի վարկերի գծով</b>		<b>89.00</b>	<b>30.38</b>	<b>4.81</b>
<b><i>Միջազգային կազմակերպություններ</i></b>		<b>78.54</b>	<b>21.88</b>	<b>3.29</b>
1	Արժույթի Միջազգային Հիմնադրամ (IMF)	16.24	20.51	2.27
2	Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (IBRD)	-	1.37	0.23
3	Ասիական Զարգացման Բանկ (ADB)	-	-	0.07
4	Եվրոպական Ներդրումային Բանկ (EIB)	62.30	-	0.71
<b><i>Օտարերկրյա պետություններ</i></b>		<b>10.47</b>	<b>8.50</b>	<b>1.52</b>
1	Գերմանիա (KfW)	10.47	8.50	1.52

**Հավելված 6. ՀՀ կառավարության կողմից տրամադրված և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող երաշխիքները**

Վարկատու	Երաշխավորագրերի տրամադրման ամսաթիվը և համարը	Վարկատու բանկի անվանումը	Երաշխիքի ավարտման ամսաթիվը	Գործող երաշխիքի գումարի չափը (ԱՄՆ դոլար)
«Թամարա Ֆրուբ» ՓԲԸ	28.06.2011թ. N 1(01)EP/2011	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	15.04.2018թ.	1,987,578 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ
<b>Ընդամենը</b>				<b>1,987,578</b>

## Հավելված 7. Պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային շուկայի գործակալները

### «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Հասցե՝ 0010, Երևան, Պուշկինի 19  
Հեռախոս՝ (37410) 54 79 35

### «Արմավիսբանկ» ՓԲԸ

Հասցե՝ 0010, Երևան, Վազգեն Սարգսյան 10  
Հեռախոս՝ (37410) 52 95 97

### «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Հասցե՝ 0009, Երևան, Տերյան 66  
Հեռախոս՝ (37460) 65 50 32

### «Արդշինբանկ» ՓԲԸ

Հասցե՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 13  
Հեռախոս՝ (37410) 56 18 95

### «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հասցե՝ 0010, Երևան, Վազգեն Սարգսյանի 26/1  
Հեռախոս՝ (37410) 51 12 06

### «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Հասցե՝ 0010, Երևան, Նալբանդյան 46  
Հեռախոս՝ (37410) 54 72 49

### «Ամերիաբանկ» ՓԲԸ

Հասցե՝ 0010, Երևան, Գրիգոր Լուսավորչի 9  
Հեռախոս՝ (37410) 51 31 73

---

### ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՀ, ք. Երևան - 0010, Մելիք-Ադամյան 1  
Հեռախոս՝ (374 11) 910 405  
Էլ. հասցե՝ [www.minfin.am](http://www.minfin.am)

### ՀՀ կենտրոնական բանկ

ՀՀ, ք. Երևան - 0010, Վազգեն Սարգսյան 6  
Հեռախոս՝ (374 10) 583 841  
Էլ. հասցե՝ [www.cba.am](http://www.cba.am)